№ 206 ՀԻՆԳՇԱԲԹԻ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1913 ՀԱՐՅԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 206

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամիսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.
Սկսած 1-ից մինչև հոկտ. 1-ը—85 կ.:
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակաղրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայ սեզոնի համար հրաւիրում է

ԵՐԳԻՉՆԵՐ ԵՒ ԵՐԳՉՈՒՀԻՆԵՐ

Ցանկացողները ձայները փորձելու և պայմանների մասին տեղեկանալու համար կարող են դիմել պ. Միքայէլ Միրզայեանին ամենայն օր երեկոյեան ժամը 6—7-ը:
Հասցէ՝ Сололакская 20. Դրամատիքական Ընկ. գրասենեակը:
առ. 795. 2 2

Հինգշաբթի, սեպտեմբերի 19-ի երեկոյեան
Ներսիսեան դպրոցի հին շինութեան դահլիճում նշանակված է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՑՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Պարապմունքի առարկաներն են՝
1) Վարչութեան զեկուցումը ամարային գիւղատնտեսական գործունէութեան մասին:
2) Ա. Աթանասեանի զեկուցումը՝ «Ինչ կարող է արտահայտել Անդրկովկասը մայրաքաղաքների շուկաների համար»:
3) Ա. Քարտաշեանի զեկուցումը՝ «Ինստրուկտօրական գործունէութիւն Բօրչալուի գաւառում»:
Սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին: Կարող են ներկայ լինել և հիւրեր:
առ. 796. 2—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Վ. ԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրեան ներքին այգում. Մուտքը վճարով—մեծերից՝ 30 կ., երեխաներից՝ 20 կ.:

Հրապարակը կը փակվի սեպտեմբերի 22-ին

(կ. հ.) առ. 781. 3—2

412 ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆ 1912

Տառերի գիւտի 1500-ամեակի առիթով Ս. ՍԱՀԱԿԻ, Ս. ՄԵՍՐՈՊԻ մեծադիր, ֆոտո-գրաւիւր պատկերների զոյգը 3 ր., Ս. ԷՋՄԻԱԾԻՆ և ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ պատկերների հետ 5 ռուբլի:
Կուղարկվեն յատուկ խողովակներում.
ԴԻՄԵԼ՝ Тифлисъ, БЮРО-ПЕЧАТИ Головинскій пр. 41.
(օ. մ.) առ. 31 5—1

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
357. 50—39 (հ.մ.)

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ
Գ. ՎՐՈՅՐ
Վերադառնալով Եւրոպայից ՎԵՐՍԿՍԵՑ
ԶՈՒԹԱԿԻ ԴԱՍԵՐԸ:
Հասցէն՝ Շելկովնիկովսկայա № 4, բնակ. 3.
առ. 794. 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. ԿԷՈՆՋԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ՝
Ամեն օր { Առաւօտեան ժ. 9—2-ը / Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արաս-Արագսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(Ե.հ.կ.) առ. 769. 74—4

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Գ. Խ. ԽՕՋԱՄԻՐԵԱՆԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐ. № 18.
առ. (օ. մ.) 789. 6—2

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ մանրի, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (ստացիոնարՆ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն կանացի, մանրի և մանկական հիւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ե. Վեսելովսկի
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ե. Զ. Ռամիկեան
Ա. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ.կ.) առ. 779 100—88

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ
(Մասնագէտ մեզասեռային, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների)
վերադառնալով արտասահմանից վերսկսեց ցեր. ժամը 1—4-ը և երեկ. ժամը 7—9-ը, Միխայլովսկի պր., 38. տէլէֆոն 6—63.
(Ե. հ. կ.) առ. 753. 10 5

ԲԺԻՇԿ
Ե. ՔԵՐԵՍՏԷՋԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ԶԱՑԻՆ հիւանդութիւններ:
(Առանձն. կրծքի, թոքախտի և արեան պակասութեան)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր { Առաւօտեան ժ. 12—2-ը / երեկոյեան ժ. 5—7-ը
Դրոֆեսկայա, 3 (Լօրիս-Մելիքովսկայա փողոցի կողմից):
(Ե.հ.կ.) առ. 774. 100—3

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՔԻԻՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՌՆԿՈՒՄԸ

Երզրում, 12 սեպտեմբերի

Քիւրդական շարժման կենտրօնը այժմ փոխադրվել է Վանի վիլայէթում, թիւրքական սահմանագլխի վրա: Շարժման ղեկավարն ու հոգին այժմ Աբդուլ-Բէդալն է, քիւրդ նշանաւոր բէկը, դարձեալ Բէդէր-խանէների շառաւիղը: Նրա ստորագրութեամբ պրոկլամացիաներ են լոյս տեսել Վանի և Բիթլիսի նահանգներում, որոնցով նա կոչ է անում քիւրդերին միանալ և հիմնել քիւրդ փադիշահութիւն: Այդ պրոկլամացիաներում գծված են այն միջոցներն ու ճամբան, որոնցով կարելի պիտի լինի իրականացնել իդէալը:

Ցաղջրդով ես կուզարկեմ այդ հետաքրքրական դոկումենտի պատճէնը:

Թիւրք կառավարութիւնը ևս իր կողմից նախատեսել է վանդը ու երբեմն-երբեմն գիմում է խիստ միջոցների: Անհ Բօհտանի գաւառը, որ ներկայումս թատերավայրը եղաւ քիւրդերի և պետական զօրքի արիւնոտ ընդհարման: Բէդէրխանների ցեղի ապստամբութեան օրից մինչև այսօր՝ մօտ կէս դար այդ գաւառը ապրել է անկախ դրութիւն, ոչ կառավարութիւն է ճանաչել, ոչ դատարան ու օրէնք. ոչ զօրք է տուել և ոչ տուրք: Բացի այդ բոլորից հանդիսանում էր որբան քիւրդական շարժման:

Պետական երեք վաշտ զինուորներ, պուլեմեօներով ու թնդանօթներով զինված՝ պաշարել են այդ գաւառի կենտրօն Հալալի գիւղը և պահանջել հպատակութիւն: Քիւրդերը զէնքով դիմադրել են: Կուռող քիւրդերի թիւը եղել է 2000-ի չափ, զինված կանօնաւոր հրացաններով: Կռիւը տեւել է մի օր, որից վերջ քիւրդերը նահանջել են դէպի լեռները՝ տանելով իրանց հետ ընտանիք ու գոյք: Կառավարչական պատժիչ զօրամասը թնդանօթով աւերել է գիւղը: Երկուսաթեք ևս կան սպանվածներ ու վիրաւորներ: Զօրքը գրաւել է քիւրդերի մի քանի հազար ոչխարները, տների մէջ մնացած գոյքերն ու պաշարները, աւերել է մօտ 7000 փեթակներ, փչացրել հունձքերն ու մնտեսութիւնը: Կատարել են բռնաբարումի մի քանի դէպքեր: Կառավարական զօրքը մեծ մասամբ վերադարձել է Բիթլիս: Քիւրդերը որպէս թէ պատրաստվում են յարձակման:

Մնուսից եկած մի կառավարական պաշտօնեայ զեկուցեց, որ այդ շրջանում ևս քիւրդերը տենդոտ պատրաստութիւնների մէջ են, եռանդուն կերպով զինվում են և երբեմն սպառնում գուրս վռնտել կառավարութեան պաշտօնեաներին:

Սպանված է Մոկսի (Վան) նշանաւոր Մօրթօլլան քիւրդ բէկը: Կառավարութիւնը մեղադրում է հայերին: Երեք վաշտ զինուորներ ու ոստիկաններ հետապնդում են սպանիչներին:

Ներքին գաւառներում շատ ճանապարհներ դարձել են խիստ վտանգաւոր:

Վերջին մի քանի շաբաթվայ ընթացքում լարերն ու թիւրքերը մեծ քանակութեամբ պետական զողացված հրացաններ բերին Երզրումի շրջանում և իսկոյն և եթ վաճառեցին քիւրդերին:

Բղեի մօտ, գերսիմցի Ալան աշիրէթը Հասան-բէկի հրամանատարութեան տակ բանակ դրեց Բղեի Հէրթեկ, Մէկան և Ալթուն գիւղերի միջև գտնված անտառում: Զինվածների թիւը գրեթէ 150 էր: Կառավարութեան խնդրանքով աշիրէթը հեռացաւ դարձեալ Դերսիմի լեռներում:

Երզրում-Բիթլիս ճանապարհի վրա, Ալալիի գաւառում պետական կրթական տեսուչը և ուրիշ պաշտօնեաներ քիւրդերի կողմից թալանվեցին:

Թալանչիները ազատօրէն հեռացան:

Բաբերդում փոլիս էօմէր էֆէնդին զինված յարձակում է գործել անցորդ կանանց վրա:

Դիարբէքիրի վիլայէթում քիւրդերի և պետական զօրքի միջև զինված ընդհարում է տեղի ունեցել: Պատճառը քիւրդերի տուրքը վճարելու մերժումն էր:

Բղեի Սուկլուկ գիւղի հայերը զինված քիւրդերի կողմից ենթարկվել են յարձակման: Հայերից կան 6 վիրաւորներ:

Բուրմ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 17 օգոստոս

«Ձեր սուրը և մեր պարանոցը»: Այս էր Ն. դարու հայոց նշանաբանը սասունեան պերճեան դաժան ու մարդախոշոշ հալածանքներու և սրախողխողումներու դէմ: 20-րդ դարու մէջն ենք, և դրութիւնը փոխուած չէ բնաւ, միայն թէ բռնութիւններն այս անգամ ոչ թէ պարսիկներէն, այլ թիւրքերէն կուգան մեզի. ասոնք կը թալանեն ու կը ջարդեն մեզ, հրկիզումներու ու սպանութիւններու կենթարկեն զմեզ, իսկ մենք կարտասանենք մեր ճառերը, կը զբաղինք մեր յօբելեանական տօնակատարութիւններով և «պլատֆօրմներով»:

Մէկ երկու շաբաթ առաջ մեր պատմական Աշտիշատը կը ցնծար ու կը բերկրէր յօբելեանական ճառերու և ազգային երգերու և խրախճանքներու տարափի տակ: Անդին՝ քիչ հեռուէն՝ նոյնպէս կը հրճուէին մարդագայլերու վոհմակները ակռայի կրճատոցներով՝ ըսել ուզելով մեզ թէ «սպասեցէք և քանի մը օրէն կը տեսնէք ձեր տաք ճառերու արդիւնքը»: Եւ ճիշդ՝ հանդիսակատարութենէն 15 օր յետոյ, ահա բոցակէզ հրդեհը կը լափէ խեղճ, մերկ ու անօթի աշտիշատցիներու ձմեռուան պարէնը:

Երբ վրէժխնդիր քիւրդի ձեռքը հեռու չհասնի՝ մեծերը պատժելու, ան իր քինախնդրութեան չար ոգը կը լուծէ խեղճ շինականէն, զրկելով զայն իր ապրելու միջոցներէն և դարձնելով յաւիտենական ըստրուկ և քիւրդին, և թիւրքին ու կառավարութեան և նոյնիսկ ճառասէր հայուն:

Գիւղցիք ազգ. առաջնորդարան եկած ադիոզրամ կուլային իրենց թշուառ դրութեան վրայ և կը հաւատային, որ Նահապետ Խաչիսի և անոր հօրեղբօր՝ Պօնդէյի կալերը և ցորենի բարդոցները հրոյ ճարակ են եղեր: Գիւղացիները կը կասկածին, որ քիւրդ Դրպոյի Նատոյի տղաքը դիտմամբ հրկիզած են, բայց իրենք գիւղացիք կը վախնան ուղղակի անունց վրայ «արգուհալ» տալու, նկատելով որ կառավարութիւնը ոչ մի դրական քայլ պիտի առնէ անունց դէմ, մինչդեռ գիւղացիները բաց յայտնի թշնամանալով այդ քիւրդերու դէմ՝ այլ ևս պիտի ստիպուին կեանքի գնով սրբել այդ բողոքը:

Ու հայերը՝ զրուած այս անելանելի վիճակէն՝ ձեռք առած են գաղթի գաւազանը ու կը գաղթեն օրերով ու շաբաթներով մասսայական չափերով:

Բոլորը կերթան. և ծեր, և երիտասարդ թէ անհատապէս և թէ ընտանիքով կը գաղթեն ու կը վազեն հեւ ի հեւ... կերթան գիշերով ու ցերեկով, կերթան ամեն ներելի ու անները մի միջոցներով: Ծանօթներ կը հաստատեն, որ միայն Խասգիւղէն այս մէկ ամսուան մէջ գաղթեր են 2 յայտնի կարաւան: Առաջինը 40 հոգիէ բաղկացած, իսկ երկրորդը 35 հոգիէ, բացի կիներէն և մանուկներէն և բացի անյայտ փախչողներէն, որոնց թիւ ու ցուցակ չկայ: Այս տարի գարնան սկիզբէն Ամերիկայէն նորեկներ կային, որոնք 7—8 տարիէ ի վեր Ամերիկա էին և իրենց անձնական աշխատանքով կրցեր էին փոքրիկ տնտեսութիւն մը խնայել և օսմ. տահմանադրութեան հմայքի տակ եկեր էին վայելելու հայրենի հողի ու ջրի անուշութիւնը: Հազիւ սակայն մի քանի շաբաթ ու ամիս մնացին, և ահա դառն հիասթափումը վրայ կը հասնի: Եւ անոնք են, որ կը վերադառնան, կը փախչին դէպի Ամերիկա՝ քաշելով իրենց հետէն մոլար ոչխարային ամբոխ մը, որ շփոթած՝ ուր դիմելը չի կըբնար մտածել: Եւ եթէ գաղթը այս սասանութեամբ շարունակուի մեր շրջանէն դէպի Նոր-Աշխարհ, կերեւի թէ Ամերիկայի Կալիֆօրնիա շատի Ֆրէզնոյի շրջանը պիտի դառնայ երկրորդ Տարօն մը:

Թախիծ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 7 սեպտեմբերի

Ատամնարոյժ Մելքոն էֆէնդիի՝ պահակ շրջող ոստիկանի ու ժանդարմների կողմից սպանվելու պատճառով քաղաքիս շուկան հինգ օր փակ մնալուց յետոյ՝ վերաբացվեց ամսիս 3-ին: Կառավարութիւնը ոչ մի ջանք չը գործադրեց կրպակները վերաբանալ տալու. ընդհակառակը վալի Թահսին բէյ, որի դէմ էլ բողոքել էին հայերը՝ Մելքոնի հանդիսաւոր թաղումը զէնքի զօրութեամբ արգելել ուզելուն համար, յանձնապատասխանէն պատասխանել էր հայոց առաջնորդին, որ «իմ հոգը չէ ամենևին թէ կրպակները կը բացվեն կամ փակ կը մնան. ես որչափ ուզեմ՝ կարող եմ Վանում մնալ վալի»: և աւելացրել էր, որ «եթէ ինձ ծանօթ լինէր, թէ ժողովուրդը Մելքոնի թաղման ժամանակ դէմ կը կանգնէր կառավարութեան հրամաններին և բռունցք ցոյց կը տար, ես երկու վաշտ զօրք կը բերէի ու կրակել կը տայի այդպիսի ըմբոստների վրա»:

Կրպակները փակելու ցոյցն աւելորդ էր անշուշտ, թէկուզ դա մի խաղաղ ցոյց լինէր, մանաւանդ որ՝ առանց բաւարարութիւն ստանալու վերաբանալն էլ մի տեսակ ամօթ է:

Վալի Թահսին-բէյը չէ՞ խոստացած արդեօք, որ իր հրամանը, ցրելու յուզարկաւորների բազմութիւնը, մի շաբաթ ապօրէն հրման էր և դրա պատճառով պատահեց ընդդիմութեան ժողովրդի կողմից ու ֆիասկոյի: Վալի Թահսին բէյ արգելել էր ուղում հազարաւոր ժողովրդին հետևելու մի անմեղ զոհի դագաղին և իբրև այն հուսկ յարգանք ընծայելու զոհին. իսկ սա առաջին օրինակը չէր. չէ որ նրանից առաջ էլ պատահել էր այդ՝ Բաֆայէլի, քաղաքապետ Գափամաճեանի, շանտաժիստների գնդակին զոհ եղած երկու երիտասարդների թաղման ժամանակ, երբ ոչ մի վալի չը փորձեց արգելել փառաւոր յուղարկաւորութիւն և թաղում յիշեալ անմեղ զոհերին. չէ՞ որ արգելելու փորձը կասկած է տալիս, որ ուրեմն սպանութեան կողմակից են եղել կառավարութեան պաշտօնեաները:

Կառավարութիւնը հրատարեց Մելքոնի գանգից հանված գնդակի քննիչ փորձագէտների տեղեկագիրը, որով արուեստագիտօրէն ցոյց է տրվում, որ գնդակը պահակների կրած զէնքերի գնդակից չէ, որով ապացուցվում է, որ հարուածը գրսից է եկել, ինչպէս պահակները ասում են, բայց վկաների ցուցմունքները հակառակն են հաստատում, իսկ գնդակի քննութիւնը առաւելն ցոյց է տալիս այն, որ պահակները կարող են կրել նաև ուրիշ զէնքեր, և սա առաւել քան բնական է թուում, եթէ սպանութիւնը կատարվել է դիտմամբ և ոչ թէ դիպուածօրէն, ինչ որ ցոյց են տալիս վկաների ցուցմունքները:

Այս շաբաթում մի սխալ լուր տարածվեց քաղաքումս, թէ իբր Մոկաց գաւառի միւդիր հայասէր քիւրդ Մէյթուլլահ-բէյն սպանվել է շէյխ Սայիդ Ալիի հօրդաներից: Լուրը Շատախից հեռագրելէր «Աշխատանք» թերթի թղթակիցը, բայց սխալ լինելով, թղթակիցը քաղաքս բերվեց ու բանտարկվեց, թէև այդպիսի լուր կառավարութիւնն էլ ստացել էր: Թղթակցի հաղորդած լուրը թէև սխալ է, բայց Մուսա-բէյի սպանութեան պատճառով քիւրդերի մէջ գրգռութեան նշաններ են երևում, որոնք հավիւ թէ զսպվում են կառավարութեան կողմից ձեռք առնված զգուշացուցիչ միջոցներով: Կարգական գաւառը քարուքանդ լինէր, եթէ այդ սպանութեան պատճառով զօրքերը չը փութային զիմել այնտեղ և պատահանութիւնների առաջը չառնէին: Կարգանցիները թէև նախապէս կասկածելով հաւանական յարձակումներից՝ թողին գիւղերն ու ապաստանեցին լեռներում, բայց ի վերջոյ վերադարձան, տեսնելով որ զօրքը պահպանում է ժողովրդին: «Աշխատանք» թերթը մի յատուկ յօդուածով գնահատեց զօրքերի այս կօրրեկտ վարմունքը:

Մարակ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Թիւրք-բօլգարական դաշնագիրը որոշում է, որ տասն օրվայ ընթացքում պայմանաւորված կողմերի զօրքերը պէտք է հեռանան զիջված տեղերից: Երեք օրվայ մէջ կատարվում է զինադադարի զործողութիւնը: Անյապաղ վերականգնվում են դիւանագիտական յարաբերութիւնները, պօստ-հեռագրական և երկաթուղային հաղորդակցութիւնները: Գերիների և պատանդների փոխանակումը կատարվում է մի ամսում: Նրանց պահպանութեան ծախքերը ընկնում են այն կառավարութեան վրա, որի իշխանութեան ներքոյ նրանք գտնվում են. Օֆիցէրների ռոճիկները արվելու են այն

պետական գանձարանից, որի հպատակն են նրանք։ Երկու շաբաթվայ ժամանակամիջոցում պէտք է յայտարարվի լիակատար ազատութիւն նախքան պայմանագիրը կապելը տեղի ունեցած քաղաքական դէպքերին մասնակցողներին։ Բոլգարիային անցնող երկիրներում ծնվածները, որոնք այնտեղ էլ բնակվում են, դառնում են բոլգարահպատակներ, ըստ որում նրանց իրաւունք է տրվում չորս տարի յետոյ համաձայնութիւն յայտնել նորից թիւրքահպատակութիւն ընդունելու մասին։ Բոլգարահպատակութիւն ընդունած մահմեդականները յիշեալ ժամանակամիջոցում զինուորական ծառայութիւն չեն կրում և զինուորական տուրք չեն վճարում։ Բոլգարական երկրում բնակվող մահմեդականները վայելում են բոլգար ծնվածների հետ համահաւասար քաղաքացիական ու քաղաքական իրաւունքներ։ Սուլթան խալիֆայի անունը կը յիշատակվի մահմեդականների հրապարակական աղօթքների մէջ։ Թիւրքիաբնակ բոլգարական համայնքները վայելում են մնացած քրիստոնեայ համայնքների հետ հաւասար իրաւունքներ։ Օսմանեան կառավարութեան պարտականութիւններն ու իրաւունքները արևելեան երկաթուղագծերի նկատմամբ Բոլգարիային զիջանվող երկիրների սահմաններում անցնում են բոլգարական կառավարութեանը։ Լօնդօնեան պայմանագրի որոշումները մնում են իրանց ոյժի մէջ, որ չափով չեն փոփոխված ներկայ դաշնագրի որոշումներով։

Հաշտութեան վեհաժողովի վերջին նիստը գնվեցաւ մեծ վէճերի ներկայութեամբ, որ շնորհաւորեց վեհաժողովի անդամներին ձեռք բերած հետևանքների համար։ Սավօվը արտասանեց պատասխան ճառ։

Բոլգար պատգամաւորները շուտով մեկնելու են Կ. Պոլսից, բացի Տօշևից, որին յանձնարարված է բանակցել առևտրական պայմանագիր կապելու մասին։

—

Սոֆիա.—«Նարոդնի Պրավան», խօսելով ալբանների ապստամբութեան մասին, ասում է. «Զսպելով ժողովրդի ցանկութիւնը՝ արտայայտելու իր արդարացի զայրոյթը անօգնական Սերբիայի դէմ, բոլգարական կառավարութիւնը ամեն ջանք գործադրում է այն խորին համոզմունքով՝ թէ բոլգարական պրօբլէմը տակաւին լուծված չէ վերջնականապէս։ Բոլգարիան վճռած ունի յարգել մեծ պետութիւնների խաղաղասէր խորհուրդները և ստանալ այն, ինչ որ նա ձեռք բերեց և ինչին նա արժանի է իր անուրի զոհերով»։

—

Սկոպլէ.—300 հոգուց բաղկացած բոլգարական հրոսախումբը գրաւեց Օխրիդան։ Սեպտ. 15-ին գրաւվեց Ստրուգան։ Շուտով գալու է Էսկիսաղան և գրաւելու է Բիտոլին, ուր յայտարարվելու է Մակեդոնիան աւտոնոմ։ Մօտ 300 ալբաններ շարժվում են Լիմոսի վրայով դէպի Պրիզրէն։

—

Բէլգրադ.—Դիակովոյի և Իպէկի շրջանների առնաւտները կարգադրութիւն ստացան 5 օրով մի-մի զինուոր ուղարկել ամեն մի տեղ, այլապէս բոլորն էլ սրի կը քաշվեն։

Հեռանալով Մակրովից, ալբանները հրդեհել են բոլոր գիւղերը և կոտորել բոլոր քրիստոնեաներին, ինչպէս և այն առնաւտներին, որոնք հրաժարվել են միանալ նրանց։

—

Պարիզ.—«Թանի» աշխատակցի հետ խօսելով, Պաշիչը յայտնեց, որ Սերբիան ստիպված կը լինի ոչ միայն յետ մղել ալբաններին սերբական երկրից, այլև գրաւել Սերբիայի ապահովութիւնը որոշող ռազմակէտերը։ Ալբանիայի հետ բացիօնալ ռազմական սահման ունենալու համար Սերբիան կաշխատէ կանոնաւորել սահմանները։ Պաշիչը յոյս ունի, որ Սերբիայի այդ մտադրութիւնը առարկութեան չի հանդիպի մեծ պետութիւնների կողմից։

ՄԵԾԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱՏԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՍԸՐԸ)

—o—

Նոր հեռագրեր

Կ. Պոլիս, 4 սեպտեմբեր

Թիւրք և բուլգար բանակցութիւնները կը շարունակվին, և եթէ հաւատ ընծայել պէտք է, անոնք վախճանին հասնելու այնքան մօտ են, որ վաղը իսկ պիտի ստորագրվի նախնական պայմանագիրը, որ վերջնական հաշտութեան հիմ պիտի ծառայէ։ Դարձեալ ասին կողմէ կը հաւաստուի, թէ թիւրք և հելլէն բանակցութիւններն ալ վերջանալու վրայ են։

Հետևաբար այլևս թիւրքիա պատերազմիկ վիճակէն պիտի մերկանայ, և երկիրը պիտի ստանայ բնականոն վիճակ մը, անշուշտ սկսելու համար... տեսականին մէջ խաղաղ աշխատութեան և բարգաւաճումի շրջան մը կամ իր ներքին հին կռիւներուն, որոնք ժամանակէ մը ի վեր դադրած էին՝ հասարակաց թշնամիին դէմ կռուելու համար։

Եւ երևոյթներէն դատելով երկրորդը աւելի հաւանական կերևայ, քան թէ առաջինը, որուն համար կերևայ թէ թիւրքիա իր արդի ձևին մէջ բնաւ ընդունակ չէ։

Երկու օր առաջ Կ. Պոլիս հասնող ֆրանսական «Թան» օրաթերթին մէջ թղթակցութիւն մը կար, որ կը նկարագրէր բանակին մէջ պատահած անցուդարձ մը, որ նախ մեզի անհաւատալի թուեցաւ, հիմա սակայն կը հաստատուի։

Յայտնի է, թէ բանակը Զաթալջա գտնըված պահուն բաւական իր վրայ խօսեցնել տուաւ Աբուլ-փաշա մը, որուն համար կըսէին, թէ բանակին մէջ վայելած իր ժողովրդականութեամբը օր մը վրէժը պիտի լուծէր սպանուած Նազըմ-փաշայի։

Քանի մը անգամ լսուեցաւ, թէ Աբուլ-փաշա դէպի Կ. Պոլիս պիտի քալէ և այլն։ Բայց այս զրոյցները բնաւ չիրագործուեցան, առանց սակայն բոլորովին հիմէ զուրկ ըլլալու, վասնզի իրապէս Աբուլ-փաշա ընդդիմադիր ոյժ մը կը ներկայացնէր բանակին մէջ։

Բանակը Էդիրնէ առաջանալէն յետոյ այս զրոյցները պահ մը չլսուեցան։ «Թանի» թղթակիցը կը լսէ, թէ բայրամի օրը Էնվէր-բէյ, որուն ոխերիմ հակառակորդ մըն է Աբուլ-փաշա, մերժած ըլլալով իր զինուորական աստիճանի համապատասխան պատիւը ընծայել, վեճ առաջ եկած է երկուքին միջև և Աբուլ-փաշա ստրճանակ քաշած է Էնվէր-բէյին վրայ և զայն թեւէն վիրաւորած է։

Այս իրողութեան վրայ կեդրոնէն հրաման գացած է ձերբակալելու Աբուլ-փաշան։

Այս հրամանը երբ գործադրութեան դնելու կը ձեռնարկեն, բանակին մէջ գտնուող բոլոր սպաները կրմբոստանան և զինեալ ապստամբութեամբ մը կը սպառնան Աբուլ-փաշա չանձնել։

Կռիվը, հարահատ, կորոշէ Էնվէր-բէյը հեռացնել բանակէն։ Իրաւ ալ՝ Էնվէր-բէյ վերջերս դարձաւ Կ. Պոլիս և հոս կը մնայ։ Սակայն իր թեւը վիրաւորուած չըլլալով՝ այս պատմութիւնը մեզի անհաւատալի թուեցաւ, մինչ յաջորդ դէպքերը, որոնք Կ. Պոլսոյ մէջ, մեր աչքերուն տակ տեղի կունենան, կը հաստատեն, թէ «Թանի» թղթակցին պատմածներուն մէջ ճշմարտութիւններ կան, թէև չափազանցութիւններ ալ կան, ինչպէս Էնվէրի վիրաւորուած ըլլալու պարագան։

Արդ, հիմա հետևինք դէպքերու ընթացքին։ Երկու-երեք օր առաջ «Թանին»—Հիւսէին Զահիդի թերթը—մէջ տեսնուեցան «Բանակը եւ երիտասարդութիւնը» վերնագրով երկու յօդուածներ։

Այս յօդուածներուն մէջ չատագովուած էր սա գաղափարը, թէ բանակը պէտք է երիտասարդ ոյժերէն օգտուի։

Այս յօդուածներուն հաւանական հեղինակն է Էնվէր կամ Զէմալ (Կ. Պոլսոյ հրամանատար) բէյերէն մէկը։ Այս յօդուածին դիտումն էր՝ ծերը հեռացնել բանակէն և ասով օրինակի համար մաքրել Աբուլ-փաշայի զոյութիւնն ալ բանակէն։

Յօդուածը առաջ կը բերէ բանակին մէջ մեծ յուզում և բողոքի տեղի կուտայ։

Հակառակ անոր որ պատերազմական վիճակին բերմամբ մինչև հիմա թերթերու խափանումը Կ. Պոլսոյ զինուորական հրամանատարի կողմէ տեղի կունենար, «Թանինի» խափանման որոշումը կը արուի մինիստրներու խորհրդին մէջ։

Հիւսէին Զահիդ-բէյը, զգացուած՝ իր կուսակիցներու կողմէ ստացած այս հարուածէն, կորոշէ Իթթիհատի կուսակցութենէն քաշուիլ և դադրեցնել իր թերթին հրատարակութիւնը։

Այս ցոյցը Իթթիհատին երկպառակութեան նախաքայլը կրնայ համարուիլ, վասնզի մասնաւորապէս նոյն կուսակցութեան մէջ Հիւսէին Զահիդ ունի բազմաթիւ բարեկամներ և կուսակիցներ։

Այսօր՝ այլ ինչ այլոյ զրոյցներ կը շրջին. ոմանք կըսեն, թէ Հիւսէին Զահիդ իր հրաժարականը ետ առած է. ոմանք ալ կը պնդեն, թէ հակառակ եղած պնդումներուն՝ անդրդուելի մնացած է և հրաժարած կը մնայ։

«Թանինի» մասին ալ զանազան կարծիքներ կան։ Ոմանք կըսեն, թէ այլ ևս չպիտի հրատարակուի, ուրիշներ կը պնդեն, թէ պիտի հրատարակուի՝ փոխանցուելով իր խմբագիրներուն և միայն Հիւսէին Զահիդ-բէյն է, որ պիտի քաշուի։

Սակայն սա ստոյգ է, որ կառավարութիւնը կարգիլէ թիւրք թերթերուն այս մասին ոեէ լուր հրատարակել։

Նոյնպէս լրագրաց հաղորդուեցաւ կառավարութեան կողմէ, որ Էնվէր-բէյի անունը յիշատակելու առթիւ «ազատութեան հերոս» սովորական դարձած տիտղոսը չգործածուի և անոր մասին գովեստներ չհիւսուին։

Ասոնք ցոյց կուտան թէ արդի կառավարութեան վարիչներուն և իթթիհատական երիտասարդ զինուորականներուն միջև խրամ մը բացուած է և կարծիքներու անհերդաշնակութիւն մը կայ։

Կառավարութիւնը կերևայ թէ բանակին ըմբոստութենէն վախնալով կը զգուշանայ զայն զայրացնելէ և Էնվէրը կը զոհէ թերևս ապագայ դիկտատոր մը չպատրաստելու համար։ Ասիկա շատ չեն մարսեր երիտասարդները։ Տեսնենք թէ մինչև ուր պիտի լայնայ բացուած խրամը։ Ամեն պարագայի մէջ՝ նոր երևոյթի մը առջևը կը գտնուինք, որ կարժէ արձանագրել։

Հայորդի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մուշի մեր թղթակից Թախիծը սեպտեմբերի 7-ից գրած իր մի նամակով տեղեկացնում է մեզ, որ այնտեղի հայ ազգաբնակութեան պաշտօնական շրջաններում պատրաստութիւններ են տեսնվում մի պատուիրակութիւն կազմելու և ուղարկելու Բիթլիս՝ դիմաւորելու թիւրքահայց նորընտիր պատրիարք Զաւէն եպ. Տէր-Եղիաեանին, որ մօտերս մեկնելու է դէպի իր նոր պաշտօնատեղին՝ Կ. Պոլիս։

—

(Պետերբուրգի Հեռ. Դրոշ.)

17 սեպտեմբերի

Ռստով Դ./վ.—Վլադիկավկազի երկաթուղային վարչութեան կառավարչի տեղեկութիւնների համաձայն, սեպտեմբերի 16-ին, գիշերվայ ժամը 2½-ին Լէուշկովսկայա — Սօսիկա շրջանի մօտ պօստային № 3 գնացքի խորտակման ժամանակ սպանվել են 35, վիրաւորվել են մօտ 50 մարդ, որոնք գտնվել են պօստային ծառայողների, զինուորների և երրորդ կարգի երկու վագոններում։ Անկասկած որոշված է անձնական քննութեամբ, որ գիծը չարամտութեամբ էր փչացված։ Խորտակումից անմիջապէս յետոյ ճանապարհորդները նկատել են չարդված պօստային վագոնի մօտ չորս հոգու, որոնք յետոյ հապճեպ փախել են դէպի դաշտը։ Խորտակման տեղի մօտ գտնվել են բանալի, օղու շիշ, աղանդերի հետքեր։ Վիրաւորվածներին սանիտարական երկու գնացքներով ուղարկեցին Ռստով և «Կավկասկայա» կայարանը։

Խորտակման պատճառները պարզելու համար ճան. հաղ. մինիստրութիւնը ուղարկում է պաշտօնեայ Եակովլևին։

—

Հռոմ.—Հրատարակվեց հրովարտակ պալատն արձակելու և հոկտ. 13-ին նոր ընտրութիւններ նշանակելու մասին։ Պարլամենտը գումարվելու է նոյեմբերի 14-ին։ Խօսելով Լիվիայում անելիք գործերի մասին, հրովարտակը մատնանշում է Իտալիայի ֆինանսական նպաստաւոր դրութիւնը։

—

Վիէննա.—Տիրոլի փոխարքան առաջարկեց Հարաւային Տիրոլի իտալական համայնքներին պաշտօնագրկել իտալահպատակ անձանց։

—

Լօնդոն.—Հէլլէնների թագաւորը մեկնեց Աթէնք Տրիէստի վրայով։ Մեկնելուց առաջ թագաւորը գոհունակութիւն յայտնեց Գրէյի հետ ունեցած իր տեսակցութեան առիթով։

ԽՈՀԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ 50-ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Նուէր Աւգուստ Բէբէլի յիշատակին)

II

19-րդ դարի երկրորդ կէսից փոխվում է պատկերը Գերմանիայում. նա մտնում է արագ ու բազմակողմանի զարգացման հունի մէջ։ Տնտեսական ոյժերի վերակենդանացումը ապահովել էր քաղաքական բէակցիան դեռ 50-ական թուականներից սկսած։ 60—70-ական թուականներին իրար յաջորդող պատերազմները՝ պրուս-աւստրիական (1866) և պրուս-ֆրանսիական (1870—71)՝ խանգարեցին անշուշտ արդիւնաբերական ոյժերի զարգացման խաղաղ տեմպը։ Սակայն հէնց այդ պատերազմներն էին, որոնք, իրանց հերթին, այժմեան Գերմանիայի նորազոյն նակատագիրը սահմանելու ամենազօրեղ մոմենտները կազմեցին։ Մէկը հաստատեց Պրուսիայի հեգեմոնիայի փաստը Գերմանիայում, իսկ մեւսը վերապահեց Գերմանիային մեծ պետութեան առաջնակարգ մի դիրք ողջ Եւրոպայում։ Քաղաքականապէս քաջքշուել, Հաբսբուրգեան տունի կայսրերներին ենթակայ և զինուորապէս ցիրուցան գերմանական տերութիւնները՝ կազմեցին մի միաձոյլ կայսերական պետութիւն իր ռազմական անվիճելի հզօրութեամբ։ Մէկը միւսին օղակված և մէկը միւսին անհրաժեշտօրէն նպաստող պայմաններ պատրաստեցին Գերմանիայի համար մեծ պետութիւնների միջազգային մրցակցութեան հորիզոնում այն փայլուն, և հէնց այդ պատճառով անաւոր դիրքը, որին ականատես է մեր այժմեան սերունդը։ Ֆրանսիայից տեղափոխված միլիարդները ոչ միայն դիւրութեամբ շտկեցին պատերազմական ծախքերով ծանրաբեռնված պետութեան գեղջֆանները և դրանով ազատեցին ազգաբնակութեանը՝ նոր ու անարդիւնաբեր հարկ ու տուրքերից, այլ և օտար դրամի այդ հսկայ, պատրաստի ֆոնդը կազմեց նիւթական կուլտուրայի—տնտեսական բազմապիսի ճիւղերի—արագ ու փարթամ զարգացման հիմքը։ Պետականօրէն միաձոյլ Գերմանիան հնարաւորութիւն ստեղծեց առևտրական համերաշխ քաղաքականութեան, մաքսային միւրոյն տարիֆի դրսի մրցակցող ախոյեանների հանդէպ՝ ազգային ինդուստրիայի զարգացման ընթացքը ապահովելու համար երկրի ներսում։ Սպառազինման կատաղի տենդը՝ ցամաքի և ծովի վրա՝ իր լռելեայն սպառնալիքով տեղեր գրաւեց համաշխարհային շուկաներում՝ գնող հասարակութիւններ որոնող արտահանական ինդուստրիալիզմի ագահ պահանջներին բաւարարութիւն տալու համար։ Ուրեմն բոլորը օժանդակ գործօններ էին կապիտալիզմի թագաւորութիւնը նոր բաստեղծ կայսերական պետութեան սահմաններում ամրապնդելու համար. ուրիշ խօսքով՝ այդ բոլորը հասարակական ինստիտուտներ էին կապիտալիզմի դասակարգային ներկայացուցչի—բուրժուազիայի—օցիալական տիրապետութեան սիւները կառուցանելու համար՝ կարուծատիրական արիստոկրատիայի (գերմանական իւնկերթումի) ամրատեպ աշտարակների կողքին։

Եթէ թոյլ տայ մեզ ընթերցողը բաւականանալ այստեղ գերմանական բովանդակ յարաբերութիւնների զարգացման այս թռուցիկ պատկերով, ապա մենք կանցնէինք անմիջապէս նրա հարցադրդռութեան գլուխաւոր կէտին. ինչով բացատրել գերմանական սոցիալ-դեմոկրատիայի արագաոյ կարգի աճման ու աջողութիւնների գաղտնիքը։

Նշանենք սկզբից և եթ, որպէս յետագայ դիտողութիւնների հիմնական մի միտք, որ գերմանական ընկերա-ռամկավար կուսակցութեան քանակական աճումը և որակական ուժեղացումը՝ իր արագութեամբ և փարթամ թռիչքներով մաթեմատիկական ճշգրտութեամբ համապատասխանում է Գերմանիայի տնտեսական ոյժերի և պետական կառուցուածքի վերև յիշածս զարգացման ընթացքին՝ սկսած 70-ական թուականներից։ Նման մի էարգացում՝ իր արագութեան արտակարգ թափով և ապշեցուցիչ բազմակողմանութեամբ՝ չէ ունեցել տեխնիկական ինդուստրիան ոչ միայն Եւրոպայում, այլ և «անսահման հնարաւորութիւնների երկիր» Ամերիկայում։ Մի քանի տասնեակ տարիների ընթացքում ազրարային Գերմանիան այնպիսի չափերով ինդուստրիականի վերածվեց, որ ոչ միայն Ֆրանսիայից շատ հեռուն անցաւ, այլ և շատ ճիւղերում ահաւոր մրցութեան բռնվեց կապիտալիզմի դասական հայրենիքի՝ Անգլիայի հետ։

Իսկ ինչ է նշանակում այդ փաստը իրերի օբէկտիվ զարգացման։

Դա նշանակում է, որ կապիտալիստական ինդուստրիան Գերմանիայում աւելի արագօրէն ու փարթամ չափերով—թէև պատմականօրէն աւելի ուշ—հասունացրեց այն իրական յարաբերութիւնները, որոնց ծնցում արմատ բռնել ու բեղմնաւորել կարող էր օցիալիստական ուսմունքը։ Կապիտալիզմի յաղթական նուաճումների հետ միասին ամենաստուար շերտերով պրոլետարիատի ենթարկվեց գիւղացիական ազգաբնակութիւնը՝ մերկ դաշտերից չուելով գործարանական ժխորալից կենտրոնները։ Ամենամեծ գրաւականը նորագոյն դեմոկրատիայի դասակարգային աշխարհահայեցքի մուտքի և պատուասման՝ կար արդէն աւելի քան մեծ չափերով. դա ինդուստրիական պրոլետարիատն էր իր հսկայական բանակներով. նա էր մեկ խարիսխը ընկերվարական ուսմունքի ընդունելութեան. միայն նա կարող էր իր ակտիվ մասնակցութեամբ զանգուածային ընոյթ տալ ընկերա-ռամկավար կուսակցութեանը որևէ երկրում։

Սակայն այդ հանգամանքը, ինքնին վերցրած, միայնակ բաւական չէ, օցիալիստական ուսմունքի յետագայ զարգացման արտակարգ աջողութիւնների փաստը լուծելու համար։ Գերմանիայից առաջ Անգլիան ու Ֆրանսիան, ապա Ամերիկայի Միացեալ Պետութիւնները ունէին այդ անհրաժեշտ բաղադրիչը նոր ուսմունքի մուտքի համար, ուր, սակայն, չունեցաւ օցիալիզմը գերմանական աջողութիւնը։

Ուրեմն ուր որոնել գաղտնիքը։

Քաղաքական մոմենտների սահմաններում։

Չը պէտք է մոռանալ, որ օցիալիստական կուսակցութիւն՝ ժամանակակից հասարակագիտակօրէն հիմնաւորված հասկացողութեամբ՝ ամենից առաջ է դեմոկրատական մի կուսակցութիւն, որի առաջադրած հասարակական իդէալները՝ հագցրած գործնական պօստուլատների ձևերի մէջ, դեմօսի հիմնական տարրերի և դրանց հետ միասին նաև ամբողջութեան համար են արծարծվում և միմիայն նրանց ոյժերով պէտք է ու կարելի է իրականացնել։ Անգլիայում և Ֆրանսիայում դեռ նախաօցիալիստական աւելի վաղ հասունացած պայմաններում կարողացաւ բիւրգերական (բուրժուական) դեմօկրատիան—սրա հետ միասին յաճախ նաև բանւորականը—փաստօրէն իրականացնել յիշածս պօստուլատներից վերին աստիճանի կենսական կէտերը. դա միապետական արսօլիտիզմի և աւատական մենարտօնութիւնների անթերի վերացման և ժամանակակից քաղաքացիական ազատութիւնների հիմնական սկզբունքների լայնարձակ կիրառման փաստն է եւրոպական արևմուտքի քաղաքակրթութեան երկու հին սրբաններում։ Լիբերալ ու դեմօկրատ բուրժուազիան աւանդութիւնը թողեց բանւորական դեմօկրատիային՝ որպէս օցիալական կուի ընթում յաջորդող ըմբոստ դասակարգի, արդէն յեղաշրջված և նոր հիմքերի վրա կաղապարված պետական կազմերը, օցիօլօգիական նորաձև սարուկտուրաներ։

Այլ էին իրերի յարաբերութիւնները Գերմանիայում։ Այդտեղ բիւրգերթումը (քաղաքացիական տարրերը) թոյլ էր՝ որակով, նաև՝ քանակով, համապատասխան ժամանակի տնտեսական ոյժերի թոյլ ու դանդաղ զարգացման, ուստի գերմանական երկիրների յեղափոխութիւնը կարող էր միայն կիսակատար չափերով, ակտ ու ամենազօրական ձևերով արտայայտվել 40-ական թուականներին։ Գերմանական ներկայ բուրժուազիայի նախնիքները ժառանգութիւն թողեցին պետական կազմի ու քաղաքական սիստեմի մի այլանդակումին, ուր ժողովրդական ներկայացուցչութեան նորագոյն սկզբունքը բռնազբօսիկօրէն միացվեց միապետի անձնական կամքի կիսաաբսօլիտիստական ոյժի հետ, ուր կառավարական մարմինը ոչ թէ օրէնսդրականից կախված ու նրան ստորադրված մի օրգան է, այլ միապետ անհատի սուբիեկտիվ հանոյքով կազմվող ու լուծվող մի կոլեգիա. ուր քաղաքացիական հաւասարութեան և ազատութիւնների սկզբունքների ձևական յայտարարութեան հանդէպ՝ միջնադարեան ֆէօդալականութիւնը անարգել ու անհանջ ծաւալում է ամենուրեք իր ծնունդով ու աւանդութիւններով պայմանաւորված դասային մենարտօնութիւնները։

Ահա ձեզ յիշածս քաղաքական մօմենտները։

Եւ այդ բոլոր առանձնայատուկ դժուարութիւնները վերացնելը, իբրև օցիալ-պատմական մի մեծ, բայց և գերազանց անշնորհակալ խնդիր, ժառանգութիւն մնաց գերմանական բանւորութեան դասակարգագիտակից դեմօկրատիային։ Սա, ինչպէս տեսանք, չունէր վաղմի գաղափարային խմորումներ իր շարքերում, չունէր ազատագրական տրադիցիաներ. նա դիւրութեամբ կլանեց Ֆերդինանդ Լասսալի կրակոտ ագիտացիաները՝ ժողովրդական մասսաների քաղաքական իրաւունքների և քաղաքացիական ազատութիւնների մասին և Մարքս-Էնգէլսի յայտարարած նշմարտութիւնները՝ դասակարգային կռի ու կազմակերպութեան մասին։

B. Intimus

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԿՕՐԲԵԿՏ ՎԱՐՄՈՒՆՔ

—

Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը նորից մի անկօրբեկտ վարմունք է թոյլ տուել իրան։

Հայ հասարակութեան համար այլ ևս անկասկած պէտք է լինի, որ եթէ Թիֆլիսում ընտրված երկու յօբելեանական մարմինների միութիւնը չը կայացաւ, դրա գլխաւոր պատճառը Մեսրոպ եպիսկոպոսի վարմունքն եղաւ. նա թոյլ տուեց իրան չը կատարել Կաթողիկոսի որոշ և կարուկ հրամանը՝ ժողովի հրաւիրել միայն երկու յանձնաժողովի ներկայացուցիչներին։ Սկզբից մինչև վերջ Մեսրոպ եպիսկոպոսը այնպիսի գործելակերպ ընդունեց, որ պարզ ցոյց էր տալիս նեղ կուսակցական ոգի. նա ամեն կերպ աշխատում էր առաջ տանել հօրիզոնականների ծրագիրը. նա անկեղծօրէն չէր ցանկանում դպրոցական ֆօնդի իրագործումը. բայց չը կարողանալով յայտնի համարձակ գործել Կաթողիկոսի ծրագրի դէմ, գործում էր խլուրդօրէն, անկօրբեկտ, միայն առերես համակերպելով դպրոցական ֆօնդի ծրագրին։

Թիֆլիսի յօբել. մանաժողովը, ընտրված բօրսայի դահլիճում 1912 թ. հոկտ. 8-ին, տեսնելով Մեսրոպ եպիսկոպոսի այդպիսի նեղ կուսակցական և անկօրբեկտ վարմունքը, խոհեմութիւն համարեց յետ քաշվել և թոյլ տալ, որ գործէ նրա նախագահութեամբ կազմված ինքնակոչ «թեմական» յանձնաժողովը։ Ինքնակոչ ենք ասում ամենայն վստահութեամբ, որովհետև այդ «թեմական» յանձնաժողովի ընտրութեան մէջ թեմի հայ ժողովուրդը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել։ Սակայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը հնարաւոր և արդարացի չը գտաւ հաստատել երկու մարմիններից մէկը և յարգել նաև գրական ֆօնդի համար ապօրինաբար յայտարարված միջնորդութիւնը, այլ առաջարկեց որ երկու մարմիններն ևս գործեն միայն յօգուտ դպրոցական ֆօնդի։ Կաթողիկոսի այս որոշումը ուղարկվել է Մեսրոպ եպիսկոպոսին յուլիսի 20-ին։ Լռելով երկար ժամանակ «թեմական» յանձնաժողովը միայն սեպտ. սկզբին հրաժարական է տուել այն պատճառաբանութեամբ, թէ երկու մարմինների գոյութիւնը միևնոյն քաղաքում կարող է երկպառակութիւն և պառակտումն առաջ բերել Համազգային Մեծ Յօբելեանի տօնախմբութեան գործի մէջ։

Տեսնելով այդ հրաժարականը, Թիֆլիսի յօբել. մանաժողովը, որ քաշվել էր և սպասել էր թողել «թեմականին», որոշեց ինքն հանդէս գալ և կատարել տօնախմբութիւնը և, կօրբեկտ լինելու համար, որոշեց առաջնորդին ևս հրաւիրել մասնակցութեան, իբրև նախագահի։ Սակայն ինչ արեց առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։ Նա, փոխանակ հրաւիրելու իր մօտ այդ մանաժողովը,

կամ աշխատելու նորից միացնել երկու մարմինները, միանգամայն անգիտութեան տալով մանաժողովի գոյութիւնը, չը նայելով որ իր Պեսը՝ կաթողիկոսը ճանաչել է, որոշում է նորից ստեղծել մի այլ մանաժողով, այսինքն վերականգնել՝ այլ ձևի տակ՝ հրաժարված «թեմական» յանձնաժողովը, այսինքն ստեղծել նորից երկպառակութիւն և պառակտումն։

Հարցնում ենք. մթթէ սա կօրրեկտ վարմունք է. սա մանր, քինախնդրական և նեղ, գծուծ, թայֆայական վարմունք է։ «Կաթողիկոսը չը յարգեց իմ միջնորդութիւնը, չը ճանաչեց իմ փաստերին միակ իրաւատէր յօրել. յանձնաժողով, ես ևս չեմ ճանաչի միւս մանաժողովը, ես էլ կաշխատեմ երկպառակութիւն և պառակտումն առաջ բերել»։

Ի՞նչ է մնում անել Թիֆլիսի յօրել. մանաժողովին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի այսպիսի մի՝ եկեղեցականին ոչ վայել ձգտումների դէմ։ Իմ կարծիքով, dejouer անել նրա խաղը, ինչպէս ասում են ֆրանսիացիները, այսինքն թոյլ չը տալ երկպառակութիւն և պառակտումն ստեղծել։ Իսկ դրա համար, իմ կարծիքով, պէտք է որ Թիֆլիսի յօրել. մանաժողովը ևս հրաժարվէ և ասպարէզը թողնէ Մեսրոպ եպիսկոպոսին, հնարաւորութիւն տալով նրան նորից իր գործակցութեան հրաւիրել իր փաստերին, որոնք տաքացած հրաժարական տուին, իսկ այժմ, փոշմանելով, դիմել են իրանց նախագահին մի կերպ sauver les apparences (երևոյթները փրկել)։

Ահա ինչ պէտք է ես առաջարկեմ Թիֆլիսի յօրել. մանաժողովին, որին նեստի եմ հրաւիրել այսօր երեկոյեան։

Մենք արդեօք չենք լինի Մեսրոպ եպիսկոպոսին իր ձեռնարկութեան մէջ։

Մենք միայն կամեցանք նշանակել նրա տեղը և մի առաջնորդի անվայել վարմունքը՝ հայ հասարակութեան դատաստանի առաջ։ Հ. Ա.

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Խորապէս վշտակցում ենք յարգելի խմբագրութեանդ հասած անսպասելի կորուստի համար՝ յանձին Յովհ. Տէր-Մարկոսեանի։ Ահա մի անձնաւորութիւն, որ իսկապէս արժանի է վեհ օրինակ հանդիսանալու և ոգեւորելու այլ գործիչների։ Ահա գաղափարի իսկական զինուորը, ազնիւ ու հաստատ, չերմ հաւատով և անսպառ եռանդով տոգորված, Գր. Արծրունու credo-ի ճշմարիտ պաշտօնը։

Յարգանք քո անմոռանալի յիշատակին, հանգիստ քո վաստակաբեկ ոսկրներին։

Մի խումբ Թիֆլիսաբնակ ախալցխացիներ՝

Մկրտիչ Պալեանց, Միհրան Մեհտարճեան, Կարապետ Աղաջանեանց, Յովհ. Պալասանեան, Աս. Պալեան, Վահան Մկրտչեան

Գիշի, 12 սեպտեմբերի

«Մշակի» վշտացեալ ընտանիքին խորը կսկիծով յայտնում եմ իմ ցաւակցութիւնս, «Մշակի» հաւատարիմ դրօշակիրը անմոռանալի Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահվան առիթով։ Յաւերժ յարգանք նրա թարմ շիրմին և անմոռաց յիշատակին։

Սաթ. Զաքարեան

Թախտաբազար, 3 սեպտեմբերի

Այսօր կարդացի թանգագին Յովհ. Տէր-Մարկոսեանի մահվան մասին։ Այդ բօթը սաստիկ ցաւ պատճառեց մեզ և խորապէս վշտացրեց Թախտաբազարի հայ հասարակութեանը։ Մենք ամենքս ողբում ենք արժանաւոր գործչի մահը։ Ս. Գէորգեան

Կէրչ, 2 սեպտ.

Ռուսահայոց գրական դէմքերին մին՝ «Մշակ» լրագրի գլխաւոր և վաղեմի դեկավարներին Յովհաննէս Տէր-Մարկոսեան ոչ ևս է։

Շաբթուս Թիֆլիսէն ստացուած հայ լրագիրք նորոգ ողբացեալին մահուան գոյժը կը բերին մեզ՝ բոլոր իր տխուր պարագայիւք։

Թէև ցարդ պատիւ և պատեհութիւն ունեցած չենք ճանչնալու գրական այդ հոյակապ անձնաւորութիւնը. թէև հանգուցեալին լաւագոյն և բարձր ձիրքերը տակաւին մեզ անծանօթ են, բայց նկատելով վաղամեռիկ ողբացեալին մահուան յառաջ բերած խորունկ և լայնածաւալ վիշտը կովկասահայ ազգաբնակութեան բոլոր խաւերուն մէջ՝ կրնանք մակաբերել, թէ Յ. Տէր-Մարկոսեան հասարակ և անշուք մի անձնաւորութիւն չէր, այլ մեծ ժողովրդականութիւն վայելող մի նշանաւոր օրագրող։ Առատոր ցաւալի պարագայ մըն է յիշել, թէ ամեն անգամ, երբ կը լսեմ մահուան այսօրինակ չարաշուք և ցաւալի դոյժերը, արտայոյզ տպաւորութեամբ մը, պահ մը կամփոփուիմ տխուր մտածութեանց մէջ և խորհելով-խորհրդածելով հուսկ ապա կանգ կառնում մարդկային ճակատագրի դառն հաղներդութեանց հանդէպ։ Ո՛չ ապաքէն աշխարհի բնական ընթացքով մահկանացու մարդը գեղածիծաղ յոյսերով կը ծնի աշխարհ կուգայ, ծնողական խնամք կամ աշխատելու նորից միացնել երկու մարմինները, միանգամայն անգիտութեան տալով մանաժողովի գոյութիւնը, չը նայելով որ իր Պեսը՝ կաթողիկոսը ճանաչել է, որոշում է նորից ստեղծել մի այլ մանաժողով, այսինքն վերականգնել՝ այլ ձևի տակ՝ հրաժարված «թեմական» յանձնաժողովը, այսինքն ստեղծել նորից երկպառակութիւն և պառակտումն։

Հարցնում ենք. մթթէ սա կօրրեկտ վարմունք է. սա մանր, քինախնդրական և նեղ, գծուծ, թայֆայական վարմունք է։ «Կաթողիկոսը չը յարգեց իմ միջնորդութիւնը, չը ճանաչեց իմ փաստերին միակ իրաւատէր յօրել. յանձնաժողով, ես ևս չեմ ճանաչի միւս մանաժողովը, ես էլ կաշխատեմ երկպառակութիւն և պառակտումն առաջ բերել»։

Ի՞նչ է մնում անել Թիֆլիսի յօր. մանաժողովին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի այսպիսի մի՝ եկեղեցականին ոչ վայել ձգտումների դէմ։ Իմ կարծիքով, dejouer անել նրա խաղը, ինչպէս ասում են ֆրանսիացիները, այսինքն թոյլ չը տալ երկպառակութիւն և պառակտումն ստեղծել։ Իսկ դրա համար, իմ կարծիքով, պէտք է որ Թիֆլիսի յօրել. մանաժողովը ևս հրաժարվէ և ասպարէզը թողնէ Մեսրոպ եպիսկոպոսին, հնարաւորութիւն տալով նրան նորից իր գործակցութեան հրաւիրել իր փաստերին, որոնք տաքացած հրաժարական տուին, իսկ այժմ, փոշմանելով, դիմել են իրանց նախագահին մի կերպ sauver les apparences (երևոյթները փրկել)։

Ահա ինչ պէտք է ես առաջարկեմ Թիֆլիսի յօրել. մանաժողովին, որին նեստի եմ հրաւիրել այսօր երեկոյեան։

Մենք արդեօք չենք լինի Մեսրոպ եպիսկոպոսին իր ձեռնարկութեան մէջ։

Մենք միայն կամեցանք նշանակել նրա տեղը և մի առաջնորդի անվայել վարմունքը՝ հայ հասարակութեան դատաստանի առաջ։ Հ. Ա.

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Խորապէս վշտակցում ենք յարգելի խմբագրութեանդ հասած անսպասելի կորուստի համար՝ յանձին Յովհ. Տէր-Մարկոսեանի։ Ահա մի անձնաւորութիւն, որ իսկապէս արժանի է վեհ օրինակ հանդիսանալու և ոգեւորելու այլ գործիչների։ Ահա գաղափարի իսկական զինուորը, ազնիւ ու հաստատ, չերմ հաւատով և անսպառ եռանդով տոգորված, Գր. Արծրունու credo-ի ճշմարիտ պաշտօնը։

Յարգանք քո անմոռանալի յիշատակին, հանգիստ քո վաստակաբեկ ոսկրներին։

Մի խումբ Թիֆլիսաբնակ ախալցխացիներ՝

Մկրտիչ Պալեանց, Միհրան Մեհտարճեան, Կարապետ Աղաջանեանց, Յովհ. Պալասանեան, Աս. Պալեան, Վահան Մկրտչեան

Գիշի, 12 սեպտեմբերի

«Մշակի» վշտացեալ ընտանիքին խորը կսկիծով յայտնում եմ իմ ցաւակցութիւնս, «Մշակի» հաւատարիմ դրօշակիրը անմոռանալի Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահվան առիթով։ Յաւերժ յարգանք նրա թարմ շիրմին և անմոռաց յիշատակին։

Սաթ. Զաքարեան

Թախտաբազար, 3 սեպտեմբերի

Այսօր կարդացի թանգագին Յովհ. Տէր-Մարկոսեանի մահվան մասին։ Այդ բօթը սաստիկ ցաւ պատճառեց մեզ և խորապէս վշտացրեց Թախտաբազարի հայ հասարակութեանը։ Մենք ամենքս ողբում ենք արժանաւոր գործչի մահը։ Ս. Գէորգեան

Կէրչ, 2 սեպտ.

Ռուսահայոց գրական դէմքերին մին՝ «Մշակ» լրագրի գլխաւոր և վաղեմի դեկավարներին Յովհաննէս Տէր-Մարկոսեան ոչ ևս է։

Շաբթուս Թիֆլիսէն ստացուած հայ լրագիրք նորոգ ողբացեալին մահուան գոյժը կը բերին մեզ՝ բոլոր իր տխուր պարագայիւք։

Թէև ցարդ պատիւ և պատեհութիւն ունեցած չենք ճանչնալու գրական այդ հոյակապ անձնաւորութիւնը. թէև հանգուցեալին լաւագոյն և բարձր ձիրքերը տակաւին մեզ անծանօթ են, բայց նկատելով վաղամեռիկ ողբացեալին մահուան յառաջ բերած խորունկ և լայնածաւալ վիշտը կովկասահայ ազգաբնակութեան բոլոր խաւերուն մէջ՝ կրնանք մակաբերել, թէ Յ. Տէր-Մարկոսեան հասարակ և անշուք մի անձնաւորութիւն չէր, այլ մեծ ժողովրդականութիւն վայելող մի նշանաւոր օրագրող։ Առատոր ցաւալի պարագայ մըն է յիշել, թէ ամեն անգամ, երբ կը լսեմ մահուան այսօրինակ չարաշուք և ցաւալի դոյժերը, արտայոյզ տպաւորութեամբ մը, պահ մը կամփոփուիմ տխուր մտածութեանց մէջ և խորհելով-խորհրդածելով հուսկ ապա կանգ կառնում մարդկային ճակատագրի դառն հաղներդութեանց հանդէպ։ Ո՛չ ապաքէն աշխարհի բնական ընթացքով մահկանացու մարդը գեղածիծաղ յոյսերով կը ծնի աշխարհ կուգայ, ծնողական խնամք

մօք կաճի, կը զարգանայ, առ սակաւ չափահասութեան կը ժամանէ, տեսականէն գործնական կանքի մէջ կը մտնէ, դէպքերու՝դէմ կը կռուի, հալածանքներ, զրկանքներ կը կրէ, սև ու մութ օրեր կանցընէ, վիշտեր, տառապանքներ, չարքաշութիւններ կը տեսնէ, կեանքի բոլոր եկեղջները կը քայլէ ու կը չափէ, բաղդին երկու հակառակ ծայրերէն կանցնի, հասակը կը հասունցնայ, ալեորութիւն, ծերութիւնն վրայ կը հասնին, յիշողութիւնը կաղօտնայ, զօրութիւնը կը վշրի, հանճարը կը մարի, և հուսկ ամենայնի բնական կամ ճակատագրական մահուամբ մեռնելով և թաղուելով ի ծոց երկրի իր աճիւնն ու գերեզմանը պարզ հողակոյտ մը կը դառնան։

Ի վերայ այսր ամենայնի աշխարհի անսահման յաւիտենականութեան մէջ մահկանացու մարդուն կենցաղն ու գործերն յետ մահու նորին, կասարեալ երազ են։

Հուսկ ամենայնի եզրափակելով խօսքս՝ արտաքինս կը մաղթեմ երկնային մխիթարութիւն վաղամեռ հանգուցեալին մահուան առթիւ «Մշակ» լրագրոյ դեկավար անդամոց, որոնք իրենց ազնիւ և հարազատ ընկերոջ կորստեամբ յոյժ վշտահար և արտասրեկ եղած են. սակայն միւս կողմէն մխիթարական է նկատել, որ Յ. Տէր-Մարկոսեան փառօք և պատուով մեռած և ժողովրդական համակրանաց մեծամեծ ցոյցերով թաղուած է ի գերեզման։

Յաւերժումն իր յիշատակին և հանգիստ իր աճիւններուն։ Յ. Խաչիկեան

Գ. Օ. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՏԱՆ ԴՐԱՄԱՅԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մենք հաղորդեցինք շուշեցի հայ կապիտալիստ Պավլ Օսիպիչ Ղուկասեանի ընտանիքում պատահած ծանր դրամայի մասին։

Մոսկվայի լրագիրները հաղորդում են այդ դրամայի մանրամասնութիւնները. թէև աղաւաղում են սպանող երիտասարդի անունը, անուանելով նրան Մակդանեանց կամ Մէզարեանց, մինչ յայտնի է, որ նրա ազգանունն է Բերեջանեան և Թիֆլիսեցի հանգուցեալ Ալէքսանդր Բերեջանեանի որդին է, Պավլ անունով։ Դրաման տեղի է ունեցել հետևեալ կերպով։ Պավլ Բերեջանեանը, համալարանական ուսումը նոր աւարտած և որի ծնողները բարեկամական յարաբերութիւն են ունեցել Ղուկասեանների հետ, հետամուտ էր ստանալ 20-ամեայ օրիորդ Մարգարիտ Ղուկասեանի ձեռքը։ Մարգարիտը սկզբում ընկերաբար էր վարվում երիտասարդի հետ, բայց վերջերս յարաբերութիւնները նրանց միջև խիստ կերպով փոխվեցին։ Մարգարիտը սիրում էր նաև թարդիւնաբերող Ադամեանի որդուն։

Բերեջանեանը իմանալով այդ՝ սեպտեմբերի 9-ին առաջարկութիւն արեց Մարգարիտին, բայց ստացաւ մերժումն։ Սեպտ. 12-ին, երեկոյեան ժամը 9-ին, նա եկաւ Ղուկասեանների մօտ և սկսեց զրուցել Մարգարիտի և նրա եղբօր հետ. խօսակցութիւնը լարված ընաւորութիւն ունէր։

Այդ ժամանակ սպասաւորը մտաւ և կանդրեց երիտասարդ Ղուկասեանին հեռախօսի մօտ, ասելով որ նրան կանչում է Ադամեանը։

Հազիւ երիտասարդ Ղուկասեանը դուրս էր եկել սենեակից, երբ թնդացին մի քանի հրազարկներ։ Մարգարիտը դուրս վազեց արիւնաթաթախ, իսկ նրա հետից ատրճանակը ձեռքին վազում էր Բերեջանեանը։

Եղբայրը նետվեց Բերեջանեանի վրա, բայց սա դնելով ատրճանակի փողը իր բերանին՝ ինքնասպան եղաւ։ Մարգարիտն ստացել էր երկու վէրք՝ որովայնին և գլխին։ Կանչվեցին մինչև 40 լաւագոյն բժիշկներ և յետոյ նրան տարան Կարմիր Խաչի Տունը, ուր նա, տանջվելով մինչև առաւօտեան ժամը 11-ը, վախճանվեց։ Թշուառ հօրը՝ Պողոս Ղուկասեանին, որ Իտալիա էր գընվում, յայտնեցին եղելութիւնը և կանչեցին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գերմանացի ճանապարհորդները Ալէքսանդրոպոլի օրջանում

Ալէքսանդրոպոլ, 15 սեպտեմբերի

Գերմանական ճանապարհորդները, որ դուրս էին եկել աւտոմօբիլով Թիֆլիսից սեպտեմբերի 14-ին առաւօտեան, իրագործեցին իրանց ծրագրած նախագիծը։

Նրանք այցելեցին գերմանական Եկատերինենֆէլդ գաղութը, որտեղ ծանօթացան կոլօնիստների այգեգործութեան հետ զանազան այգիներում, այցելեցին գինեգործական նկուղներ և ուսումնասիրեցին արդիւնաբերութեան պայմանները։

Գերմանական կոլօնիստները և ազմինիստրացիայի ներկայացուցիչները հանդիպեցին ճանապարհորդներին մեծ հաճութեամբ և համակրական ցոյցերով։

Նոյն օրը երեկոյեան ճանապարհորդները արդէն Վօրոնցովկա գիւղումն էին, որտեղ նրանք այցելեցին Տալանովի պանրագործարանը և ծանօթացան գիւղի անտեսական պայմանների հետ։

Այսօր առաւօտ ճանապարհորդները այցելեցին մոլոկանների մի քանի տներ և կազմեցին մի զրոյց գիւղացիների հետ տեղական անտեսութեան բարւոքման խնդիրների մասին. ճառեր խօսեցին պրոֆ. Աուխագէն, Շէրբինին և Քալանթար։

Այնուհետև ճանապարհորդները գնացին շվեյցարացի Գոթլիբ Գրաֆի տնտեսութիւնը, ուր զիտեցին Սիմենտալի ցեղի կովերին և պանրագործութիւնը։

Յետոյ լեռնային ալպիական ճանապարհով ուղևորվեցին Ալէքսանդրոպոլ։ Ճանապարհը անցնում էր ամարանոցների կամ եյլաղների միջով. Քալանթարը, որ մի ժամանակ ուսումնասիրած է եղել Ղարախաչի արօտները, հաղորդում էր մանրամասն տեղեկութիւններ արօտների շահագործութեան եղանակների և ձևերի մասին։

Տաւարապահները արդէն իջել էին լեռներից, բացի Իլխիաբի հայ գիւղի անասնապահներից, որոնք դեռ ևս լեռան վրա էին։ Գերմանական ճանապարհորդները մանրամասն հարցեր տուին և լուսանկարեցին մարդկանց և լեռները։

Երեկոյեան ճանապարհորդները հասան Ալէքսանդրոպոլ։

Քաղաքի ներկայացուցիչները ընդունեցին հիւրերին մեծ սիրայիրութեամբ։ Ճանապարհորդները այցելեցին Առաւարական դպրոցը, որտեղ վերատեսուչ Լևոն Սարգսեան տալիս էր մանրամասն բացատրութիւններ։ Քաղաքագլուխը ծանօթացրեց հիւրերին քաղաքի անտեսական պայմանների հետ։ Ալ. Քալանթար ցոյց տուեց կովկասեան ոչխարների տեսակները և հաղորդեց մանրամասն տեղեկութիւններ նրանց մասին։

Երեկոյեան հիւրերը հրաւիրվեցին տեղական քաղաքային կլուբը, որտեղ ճանապարհորդները հիւրասիրվեցին թէյով և ընթրիքով։

Գիշերվայ գնացքով գերմանացի հիւրերը ուղևորվեցին դէպի Էջմիածին։

***

Կեանքը Բագուում

Բագու, 10 սեպտեմբերի

Զը նայելով սեպտ. ամսի մէջն ենք գտնվում, բայց և այնպէս ամարային օրերի պէս արեգակը այրում է։ Բագուում ամառը դեռ չէ վերջացել և հաւանօրէն այսպէս կը շարունակվի մինչև ամսիս վերջը։

Քաղաքի կեանքը սովորական է. նաֆթի գնի օրէ օր բարձրանալը ազդել է առևտրի վրա։

Կենսական մթերքները թանգ են։ Ներկայումս, որ տարվայ ամենաառատ ժամանակը պիտի համարել, ոչխարի մսը ծախվում է 20 կ., տաւարինը՝ 15 կ.։ Ձուն՝ 10 հատը 24 կ.։ Պակաս չեն մրգեղէնի գնները. խաղողը, Շահնի տեսակին, որը ստացվում է Բագուի շրջանի մօտիկ գիւղերից, փունտը 8 կ. է, իսկ ձմերուկը 2 կ. փունտը։

Նաֆթի գինը ամուր լինելով, բիրժայի մակլերները անգործունէութեան են մատնված։ Միջնորդների միջոցով փոքր նաֆթահանքատէրերը այլևս նաֆթ չեն վաճառում. նրանց գնողը պատրաստ կանգնած է և դեռ չարտահանած՝ նաֆթի կանխավճարը հանքատիրոջ ճակատից կախած։ Իսկ բաժնետէրերը (ակցիա) անցեալի նման 20—30 ը. օգուտով իրանց բաժինները միջնորդների միջոցով այլևս չեն վաճառում և սպասում են մեծամեծ դիվիդենտի։

Մարդասիրական Ընկ. գրադ.-ընթերցարանը տեղափոխվել է իր հին տեղը նոր շէնքի մէջ, ս. Լուսաւորիչ եկեղեցու բակը, Պարապետ հրապարակի դիմաց։

Ս. Գարագաշ

Քոսմենդի յանցագործութիւն

Զաքաթալա, 8 սեպտեմբերի

Քաղաքիցս 3 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Թալա թուրքական գիւղացիներից մէկը, որը մեր քաղաքում խոհարարութեամբ էր զբաղվում, 3—4 ամիս սրանից առաջ ամուսնանում է իրանց գիւղի մի աղջկայ հետ։ Իբրև ծառայ մարդ՝ շաբաթական 2—3 անգամ տուն գնալով, մի օր լսում է, որ իր կինը արդէն իր սէրը տուել է մի ուրիշ համագիւղացու... Լոյս այս գիշեր ժամը 11-ին քաղաքիցս մեկնում է տուն՝ ստուգելու տարածված լուրերը. և տուն հասնելուն պէս չէ գտնում տանը սենեակում իր կնոջը։ Իր հարցին՝ «ուր է կինս», տնայինները պատասխանում են՝ «նոր դուրս եկաւ»։ Ինքն էլ դուրս գալով սենեակից մտնում է գոմը, լուցկի վառում, տեսնելու՝ հօ այնտեղ չէ՞ մտել կինը, և յանկարծ մի քսմենի տեսարանի է հանդիպում—իր կնոջը մի տղամարդու հետ. կնոջ գաղան տարփածուն խլոյն ՝ եթէ դաշոյնը խրում է խեղճ խոհարարի փորը և ինքը չքվում անյայտանում։ Սօյզաղէ

Դարձեալ մի սխալ կարգադրութիւն

Գօրի, 11 սեպտեմբերի

Կիրակի, օգոստոսի 25-ին, տեղիս ս. Սահակ-Թանոս քարաշէն եկեղեցուն, որի մօտ 300 տուն ծխականները ահա երկու տարի է մնացել էին առանց ծխատէր քահանայի, տեղիս եկեղեցիների գործակալի կողմից նշանակված էր ծխականների ժողով, քահանայ ընտրելու համար։ Այդ օրը ժողովը չը կայացաւ ծխականների օրինաւոր թիւ ներկայ չը լինելու պատճառով, ուստի հայր գործակալը երկրորդ ժողովը նշանակեց կիրակի, սեպտեմբերի 1-ին, և միևնոյն ժամանակ յայտնեց ներկայ եղողներին, որ երկրորդ ժողովը լինելու է օրինաւոր, և ինչ թւով որ ծխականները ներկայ լինեն, այնուամենայնիւ ընտրութիւնը կը կայանայ։

Նշանակված օրը ծխականները ժամը 12-ին շտապեցին եկեղեցի, ուր մէկ ժամից աւել սպասելուց յետոյ իմացան, որ հայր գործակալը ոչնչի տեղ դնելով իր նշանակած ծխականների ժողովը, գնացել է Թիֆլիս իր սովորական գործերով։ Ծխականները, տեսնելով գործակալի կողմից դէպի իրանց անձնաւորութիւնը մի այսպիսի արհամարհանք, որոշեցին հեռացան եկեղեցուց՝ սպասելով գործակալի վերադարձին։

Գործակալը վերադարձաւ. և երբ շատերը դիմեցին նրան հարցնելով ընտրութեան մասին, նա պատասխանեց, որ «ընտրութիւն այլևս չի լինելու, որովհետև սրբազան առաջնորդը ձեզ համար արդէն քահանայ է նշանակել՝ առանց ձեր՝ ծխականների համաձայնութեան»։ Եւ վերջը իմացանք, որ, իրաւ, նշանակված է տէր Գէորգ Սոլոզանցը, որը նախ ձեռնադրված էր Գօրու գաւառի Նիչբիսի գիւղի վրա և յետոյ այնտեղից տեղափոխվել էր Քութայիս, որտեղից էլ ամենքին յայտնի է, թէ ինչպէս հեռացրին։

Ծխականները շատ զբաղած են այս վարմունքից. շատ կարելի է, որ ծխականները չընդունեն ամենեին, որովհետև ծխականները արդէն ի նկատի ունէին իրանց համար թեմականաւորը և յարմար քահանայ։ Վերջապէս չը գիտենք, թէ ինչու ոտնակոխ է լինում ծխականների ընտրողական իրաւունքը։

Այս էլ պէտք է աւելացնեմ, որ ծխականների տրամադրութիւնը նշանակվի քահանային չընդունելի է. և երևի սրան էլ այնպէս ճանապարհ կը դնեն, ինչպէս ճանապարհ դրին Խրիմեան Հայրիկից նշանակված տէր-Անդրէաս Արշակունուն։

Մեսրոպ Մարութեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիս վերադարձաւ և ստանձնեց իր պաշտօնը պարսից գեներալ-հիւպատոս Սաֆրոյ Վէզարէն։

◆ Մոսկվայում հրատարակվող «Մարտ» թերթը հաղորդում է հետևեալ լուրը. «Օրերս վախճանվեց գանձակեցի Դաւիթ Մէլիք-Բէկարեանցը, որի մարը որդու յիշատակի համար որոշել է Կովկասում մի գիւղատնտեսական ուսումնարան հիմնել, յատկացնելով այդ նպատակի համար 150,000 ռուբլի»։

◆ Թիֆլիսի նահանգապետը փոխարքայի դիւանին է ուղարկել քաղաքային ինքնավարութեան միջնորդութիւնը, որպէսզի Թիֆլիս քաղաքում երկաթուղով ստացվող կամ այստեղից արտահանվող բոլոր ապրանքների իւրաքանչիւր պուդից որոշ տուրք սահմանվի յօգուտ Թիֆլիս քաղաքի։

◆ Այսօր քաղաքային վարչութեան նիստում դումայի ձայնաւորների և հրաւիրված անասնաբոյժների մասնակցութեամբ քննվելու է նոր սպանդանոցի կառավարութեան մարմին ընտրելու հարցը։

◆ Այս տարի նորակոչ զինուորագուները Թիֆլիսի քաղաքային վարչութեան տեսանն են կանչվում ոչ թէ նախկին տարիների նման հոկտ. 15-ին, այլ երկու շաբաթով շուտ, այսինքն հոկտ. 1-ին։ Ընտանեկան կամ կրթական արտօնութիւն վայելողները պէտք է շտապեն այդ մասին յայտարարութիւն ներկայացնելու քաղ. վարչութեան զինուորակոչութեան տեսանին մինչև հոկտեմբերի 1-ը։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ աշակողմեանները հարց են յարուցանում դարձեալ կովկասեան փոխարքայութիւնը վերացնելու մասին։ Մշակվում է համապատասխան օրինագիծ։ Իբրև պատճառաբանութիւն բերված է այն, թէ իբր ներկայ դրութեամբ իշխանութիւնը կազմալուծված է Կովկասում։

◆ Այսօր, երեկոյեան ժ. 7½-ին «Մշակի» խմբագրատանը նշանակված է Թիֆլիսի յօբելեանական մանաժողովի նիստը քննելու և որոշելու հերթական անկասկածելի հարցեր՝ վերաբերեալ մանաժողովի գործունէութեան. կարևոր է ընդգծել, որ թէև մանաժողովը պաշտօնապէս ճանաչված է Վեհափառ Կաթողիկոսի հաւանութեամբ, բայց Թիֆլիսի թեմի առաջնորդը միջոցներ է որոնում չը գացնել նրա նշանակութիւնը և գործունէութիւնը։

◆ Քաղաքային դումայի վերջին նիստում որոշվեց ամեն տարի 200 ր. նպաստ տալ Կովկասեան Կանանց Ընկերութեանը։

◆ Սեպտ. 20-ին Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակված է «Закавказье» թերթի խմբագրի գործը, որին մեղադրում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան երկրաչափական բաժանմունքի կառավարիչ Մելիք-Ազլահվերդեանը՝ զրպարտելու մէջ։

◆ Բագուում ձիաքարշի գործածող բանւորները համաձայնել են աշխատել նախկին պայմաններով։ Նրանք այժմ յայտարարված են պաշտօններից արձակված, միայն քաղաքային վարչութիւնը առաջարկել է նորից խնդրագրեր ներկայացնել վերընդունվելու մասին, որ տեղի է ունենալու ընդհանուր հիմունքներով։

◆ Բագուում Նոբելի ֆիրմայի գործածող բանւորներից 80 պարսիկ համաձայնել են աշխատանքները վերսկսել նախկին պայմաններով, թողնելով բանւորների պահանջների քննութիւնը ֆիրմայի վարչութեան կամքին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Թատրոն

Երեքշաբթի, սեպտ. 17-ին Զուբալօվեան Ժողովրդական Տանը հայ թատերասէրների խումբը ներկայացրեց Շիլլէրի «Աւազակները» հոյ բազմութեան ներկայութեամբ։

Մենք մի քանի անգամ տեսել են Սեւումեանին, Մանուէլեանին և Տէր-Առաքելեանին թէ Արբատական Ընկ. Թատրոնում և թէ Ժողովրդական Տանը դարձեալ Կարլոսի, Ֆրանցի և Շպիգելբերգի դերերում։ Այս անգամ էլ նրանցից իւրաքանչիւրը ոչինչ չաւելացրեց խաղին, հանդիսանալով բաւարար դերակատար՝ համաձայն իր դերասանական շնորհքի։ Կարլոսի և Ֆրանցի տիպերը ինքնին այնքան բարդ են, որ կարելի լինի պահանջել Սեւումեանից և Մանուէլեանից կատարեալ պատկերացումն։ Այն, որ ստեղծում են նրանք այդ լուրջ դերերում, ուղղակի յարաբերական է երկուսի այժերին։

Նորութիւն էր, որ Ամալիայի դերը կատարում էր Լիւսի-Սեւումեան։ Երկրորդ անգամ ընդգծելու ենք, որ հայ թատերասէրների խումբը ձեռք է բերել շահեկան այժ։ Տիկնոջ խաղը մտածված է, առոգանութիւնը ազատ. միայն հոգեկան վերապրումների ժամանակ նրա տեմպերամենտը թոյլ երևաց մեզ։

Հէրմանի դերը տ. Յամիկին տալը մենք նկատում ենք մի թիւրիմացութիւն։ Ձենք ուզում երկարել, սոսկ մատնանշելով որ ինչքան էլ նա համեմատաբար մի սիրողի հետ աչող տանի այդ դերը, բայց և այնպէս նա՝ կին է և իր կանացի ձայնով, շարժումներով, սիրոյ արտայայտութեամբ չէ կարող հարազատ տղամարդ-Հէրման լինել...

Սիրողներից յիշատակելու ենք Յարութիւնեանին և Երամեանին, որոնց վատահ խաղը մեզ գոհունակութիւն է պատճառում։

Բաւական անբռնազբօսիկ ներկայացրեց Ալլահվերդեանը Մաքսիմիլիան ծերունի կոմսին։ Ես.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Շրջաբերական արտագաղթի մասին

Կահիրէ, 31 յուլիս

Մեր ազգին գոյութեանը սպառնացող աղէտաբերուն մեծագոյնը, այս պահուս ազգային ժողովէն սկսեալ մինչև յետին ազգայինը մատնած է ամենադառն մտահոգութեանց։

Երկրին անապահով վիճակը, մէկ կողմէն, և մտաւորական անաւոր տաղնապը, միւս կողմէն, ստեղծած են այնպիսի ծանրակշիռ ու դժուարակնճիռ կացութիւն մը, որ մեր տարաբաղդ հայրենակիցներէն շատեր, կորովագիրկ, բոլորովին վհատած, կուրծքէն կը խուճապեն տարաշխարհ, յուսալով գտնել այլուր բարօրութիւնը՝ զոր իրենց հայրենական ընտանեաց մէջ այլևս անկարելի դարձեր է իրենց գտնել։

Աւաղ, այդ յոյսերը սակայն շուտ կը ցնդին, որովհետև արտասահմանի մէջ՝ հաւասարապէս դաղթականներուն կը սպասէ այլապէս տխուր և տաժանելի կեանք մը, անգործութիւն, անգործութիւն, անբարոյականութիւն, և սոսկալի անանձնա եղող կեանքին բոլոր դատութիւնները, որ օտարութեան մէջ զոհը անգթօրէն կընկճեն ու կը քայքայեն, մինչև որ՝ մայլ խորշի մը մէջ, յաճախ վերջին անկարելի հայրենաբաղձութեան մը մղձաւանջէն տանջահար, անուշադրութեամբ՝ սիրտի հատորներէն զոր երեսի վրայ թողուցին, պանդուխտի ամենէն դժան վախճանով կը մեռնին։

Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւնը, որուն գլխաւոր ձգտումն է հայրենի հողին հաւատարիմ պահել հայ ժողովուրդը և որուն բուն նպատակն է՝ ընդաւառին մէջ իսկ ստատեալ հայութեան մտաւորական ու մտաւեական բարեկեցումին իր սիրտէն վիրաւորված՝ արտագաղթի այս նոր խուճապին առջև, խորապէս կըմբռնէ այդ հոսանքին վտանգը և պարտաւոր կը զգայ ազգովին ուխտագրուած պայքարին մասնակցիլ ամենամեծ չափով։

◆ Քաղաքային դումայի վերջին նիստում որոշվեց ամեն տարի 200 ր. նպաստ տալ Կովկասեան Կանանց Ընկերութեանը։

◆ Սեպտ. 20-ին Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակված է «Закавказье» թերթի խմբագրի գործը, որին մեղադրում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան երկրաչափական բաժանմունքի կառավարիչ Մելիք-Ազլահվերդեանը՝ զրպարտելու մէջ։

◆ Բագուում ձիաքարշի գործածող բանւորները համաձայնել են աշխատել նախկին պայմաններով։ Նրանք այժմ յայտարարված են պաշտօններից արձակված, միայն քաղաքային վարչութիւնը առաջարկել է նորից խնդրագրեր ներկայացնել վերընդունվելու մասին, որ տեղի է ունենալու ընդհանուր հիմունքներով։

◆ Բագուում Նոբելի ֆիրմայի գործածող բանւորներից 80 պարսիկ համաձայնել են աշխատանքները վերսկսել նախկին պայմաններով, թողնելով բանւորների պահանջների քննութիւնը ֆիրմայի վարչութեան կամքին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Թատրոն

Երեքշաբթի, սեպտ. 17-ին Զուբալօվեան Ժողովրդական Տանը հայ թատերասէրների խումբը ներկայացրեց Շիլլէրի «Աւազակները» հոյ բազմութ

Կեդր. վարչութեան ժողովը, գիտակից իր պաշտօնին ծանրութեանը և իր ազգանուէր կոչումին մէջ իսկ անհունապէս վըրդովուած, այս կնճռալից վայրկեանին՝ թախանձագին կը հրաւիրէ Միութեան բոլոր մասնաժողովները և անոնց շուրջ այնքան անձնուիրաբար բոլորուած հազարաւոր անդամները, որպէսզի գերմարդկային ճիգեր թափելով առաջքը առնեն այս մեծ աղէտին, համոզուած թէ՝ ընութեան և բնութեան միւս բոլոր աղէտներէն շատ աւելի ծանրօրէն և գահավիժօրէն ազգային գոյութիւնը վտանգելու ընոյթը ունի արտաքաղթը։

Պէտք է մեր տառապած և յուսակտուր հայրենակիցները համոզել թէ՝ վայրկեանը երբէք այս աստիճանի բախտորոշ չէ եղած, և հայուն պարտականութիւնը երբէք այնքան մեծ՝ հայրենի հողին կառչելու, նոյնիսկ յուսահատօրէն։

Այս ցեղը աւելի ահաւոր շրջաններու կուրծք տուած, աւելի քանդիչ փոթորիկներու դիմագրաւած է։ Այս ցեղը դարերէ ի վեր վերապրած է արիւններու և աւերներու մէջէն, և հիմա որ չարիքին զօրութիւնները անբաղդատելիօրէն նուազած են, հիմա որ առաւելապէս «քաղաքական» և «անտեսական» պատճառներ միայն կը բնորոշեն անոր դասալքութիւնը հայրենիքէն, չենք հաւնար թէ ինչո՞ւ անոր կը պակսի, այսպէս, իր ճակատագիրը քիչ մըն ալ տաներու կրելու կորովը, մինչև որ իրեն համար ալ բարօրութեան արդար իրաւունքը վերջապէս իրականութիւն դառնայ իր երկրին մէջ։

Կեցուցէք արտագաղթի այս ազգակործան հեղեղը, հայրենակիցներ։ Ձեր բոլոր կամքերովը, ձեր բոլոր լանջքերովը, ձեր բոլոր ճակատներովը ծառացէք այդ աղէտին դէմ, և ըրէք որ անոր թափը կտրի, թէ ներսէն դուրս արգելափակելով հոսանքը, և թէ դուրսէն ներս անոր դէմ հանելով ետ դարձողներու շարան շարան կարաւաններ։

Միութիւնը ձեզի հետ պիտի ըլլայ ազգային ինքնապահպանումի ճիգին մէջ՝ իր բոլոր բարոյական և նիւթական միջոցներովը, և մենք գերազանց հոգը պիտի ունենանք կարելի եղածին չափ ամրցնելու այն վերքերը, որ արտագաղթի չարիքը կը մնուցանեն իրենց թարախովն ու արիւնովը։

Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան
Կեդր. վարչ. ժողով

Ե. Գ.— Միութեան մասնաժողովներէն Պարիզի տեղական մասնաժողովը առաջինը եղաւ ձեռնարկելու բացառիկ հանգանակութեան մը՝ արտագաղթի ազգաքանդ հոսանքին առջևը առնելու գովելի մտահոգութեամբ։ Կեդր. ժողովը ստացաւ այդ հանգանակութեան առաջին արդիւնքը՝ 15500 ֆրանկ։ Տարակոյս չկայ, որ Միութեան միւս մասնաժողովներն ալ, հետևելով այս գեղեցիկ օրինակին և ըմբռնելով ստիպողական պէտքը, առանց վայրկեան կորսնցնելու՝ իրենց շրջանակին մէջ պիտի ձեռնարկեն բացառիկ հանգանակութեանց, որպէսզի Միութիւնը կարենայ հզօրապէս կատարել այն բարերար դերը, զոր այս պահուս ազգը իրմէ կը սպասէ։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Լօնդոնի լրագիրներուն հաշուով՝ միայն 1912 թ. աւստրիական առևտուրը 225 միլիոն ռուբլով տուժեց բալկանեան պատերազմից։ Աւստրիան երբէք չէ կարող նորից ձեռք բերել Բալկաններում ունեցած առևտրական նախկին դերակշռութիւնը։

— Իտալիան և Աւստրիան նախազգուշացրին Սերբիային, որ թոյլ չեն տայ գրաւել Ալբանիան սերբական զօրքերով։

— Ա.քանական հրոսակախմբերը յարձակում գործեցին Դիակովոյի վրա, բայց յետ մղուեցին սերբերից, կորցնելով 400 սպանված և 600 վիրաւոր։ Սերբերի կորուստն է 120 սպանված։

— Բելգրադում ստացված տեղեկութիւնների համաձայն՝ առնաւտները հրդեհել են Պրիզրէնը։ Քաղաքը հրդեհի մէջ է։

— Բելգրադ են տանում անընդհատ մեծ թիով վիրաւորների։

— Բուխարէստում տեղեկութիւն է ստացվել, որ բուլգարական կառավարութիւնը զինում է երկու զօրաբանակ ընդդէմ սերբերի։

— Սերբական կառավարութիւնը զինուորական դատարանին է յանձնում զօրահաւաքի դէմ բողոքողներին։

— Սալոնիկում և Մակեդոնիայում յոյն զօրքերի մէջ սկսվել է ապըստամբութիւն։ Զօրքերը չեն կամենում նորից արիւն թափել։

— Թիւրքիան Ցունաստանի դէմ կենտրոնացրել է 50,000 զինուորից բաղկացած զօրաբանակ։

— Ինչպէս հաղորդում է «Н.Вр.»-ն, այս տարվայ հոկտ. 5-ին հրատարակվելու է հրաման բոլոր զինուորական բժիշկներին օֆիցէրական աստիճան տալու մասին։ Զինուորա-բժշկական ճեմարանում երիտասարդ բժիշկները կը ստանան պօրուչիկի աստիճան, իսկ յետոյ՝ հետևեալ աստիճանը ընդհանուր հիմունքներով։ Ներկայումս ծառայող բոլոր զինուորական բժիշկները քաղաքացիական աստիճաններից կը ստանան զինուորական աստիճաններ՝ մի աստիճան պակաս։

— Պարիզում շվէդական ուսման կողմնակից երիտասարդների կոնգրէսին Ժօրէսը մի կրակոտ ճառով յորդոր կարդաց բոլոր ձախակողմեաններին միանալ Գերմանիայի հետ մերձեցում կապելու հողի վրա։ Ժօրէսի կարծիքով՝ դրա համար կարելի է զիջել Էլզասը, իսկ փոխարէնը ստանալ Կոնգոն կամ Մադագասկարը։

— Վիէննայում բժիշկների համագումարում ունգար պրոֆ. Գավաչը ապացուցեց, որ կարելի է արհեստականապէս մաղեր տնկել ճաղատ գլխի վրա։

— Պետերբուրգում պաշտօնավարող ֆրանսիական դեսպան Դէլկասէին փոխարինելու է գեներալ Լիոտէն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

17 սեպտեմբերի

ԿԻԵՎ։ Ճան. հաղ. մինիստրը մեկնեց Նովօրօսիյսկ։

Քաղաքային ներկայացուցիչների համագումարը միաձայն ընդունեց, որ քաղաքային գանձարաններից ոստիկանութեան պահպանման և զօրքերի բնակարանների համար պետական գանձարանին նպաստ տալը չէ կարելի արդարացուցիչ համարել քաղաքային ու համապետական տեսակէտից։ Քաղաքային ֆինանսների արդի վերահսկողութիւնը ճանաչվեց անբաւական, վասն զի այդպիսի վերահսկողութիւնը լինելու է մշտական և միանգամայն անկախ քաղաքային վարչութիւնից։

ԻՕՀԱՆՆԻՍԲՈՒՐԳ։ Օդագնաց Սարլատնիկը բարձրացաւ երեք մարդու հետ 2830 մետր, սահմանելով համաշխարհային մրցակէաս։

ՐԷՅՄՍ։ Վերջին երեք օրը ժիլբերը բարձրացաւ 3795 մետր, Պարլէնը՝ 4532։ Երկու մարդու հետ ժիլբերը բարձրացաւ 3638 մետր, Դէբոմը՝ 2298։

ՇԱՏԼՕՐՈՒԱ։ Մարսինէլում էլեքտրաքարշի վագոնների ընդհարման ժամանակ մօտ 12 մարդ ծանր վիրաւորվեցին։

ՍԵՐԲԻԱ։ Երեք տան փլուածքի ու նրանց մէջ սկսված հրդեհին զոհ դարձան 8 մարդ, մի քանիսը վիրաւորվեցին։

ՊԱՄՊԼՕՆԱ։ Երկաթուղային կառուցման աշխատանքների ժամանակ սպանվեցին 4 և վիրաւորվեցին 3 բանուոր։

ՍԵՐԲԻԱ։ Կայծահար եղան 3 հոգի, մի քանի ամերում հրդեհ ծագեց։ Հեղեղը երկաթուղային հաղորդակցութիւնը կանգնեցրել է։ Եօթ մարդ անհետ կորել են։ Վիրաւորների թիւը մեծ է։

ՆՈՎՕՐՕՍԻՅՍԿ։ Ծովային փոթորիկ է։ Մի քանի մարդ խեղդվեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն շնորհակալութիւն յայտնվեց Լօնդոնի զեսպան կոմս Բենկենդորֆին Լօնդոնի վհատժողովում տարկուն աշխատելու համար։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՑԼ ԵՒ ԱՑԼ

— Վիէննայում, բնակչաների և բժիշկների համագումարում կարդացված մի զեկուցագրի մէջ ասված է, թէ պրօգրէսիվ անդամալուծութիւնը սիֆիլիսի հետևանք չէ, այլ ներկայանում է սիֆիլիսի մի առանձին ձև, որ պահանջում է վերաբուժական բժշկութիւն։

— Բրէսլաւում երևան հանվեց փոքրահասակներին անբարոյականացնող գաղտնի մի կազմակերպութիւն. մինչև 14 տարեկան 72 աղջիկ մասնակից էին օրգիաներին... Ոստիկանութեան ներկայութեամբ կազմակերպութեան պարագուխներից 7 հոգի անձնասպան եղան։

— Կօշնօյում անձնասպան եղաւ գիմնազիստ Ռիդերը վատ թանչան ստացած լինելուն պատճառով։

— Անգլիական մինիստր Լլոյդ-Ջորջը Աւստրալիայից առաջարկութիւն ստացաւ կարդալ մի քանի բեֆերատներ անգլիական սահմանադրութեան մասին, որի համար նա ստանալու է վարձատրութիւն 40,000 մարկ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչ՝ Ալ. ՔԱԼԱՆԹԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը (ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.— Ադրագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Ադստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստայր գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. ցերեկ։ Մարդայար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Ադստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., Խաչ գնացքը № 106 (Մարզատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Ադստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցերեկ., Եւլախ 5 ժ. 19 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ.։ Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.— Պօստայր գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 56 ր. ցերեկ., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդայար գնացքը № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդայար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խաչ գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.— Պօստայր գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցերեկ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցերեկ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցերեկ., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցերեկ., Երևան 1 ժ. 33 ր. ցերեկ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցերեկ., Կարս 4 ժ. 18 ր. ցերեկ.։

ԲՈՐԺՈՄԻ.— Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բորժոմ 9 ժ. 31 ր. ցերեկ.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցերեկ., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցերեկ., Բորժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.— Ադրագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Պօստայր գնացքը № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացքը № 7—3 ժ. 53 ր. ցերեկ.։ Խաչ գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.— Պօստայր գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդատար գնացքը № 8—5 ժ. 54 ր. ցերեկ.։ Մարդատար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խաչ գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆՑԻ.— Պօստայր գնացքը № 4Ա/3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 26,25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.— Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացքը № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԷՔՍՍԷՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱՂԱՍԷՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։

Կ. Մ. ՀԻՊՕՎԱՆԻ—9½—10 ք ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։

Զ. Ի. ԲԱՔԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկաստա.։

Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՀԷՆ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկաստա. Սրեան, մէզի, խոսքի հետազոտութիւն։

ԿԻՆ.-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳՈՒՐԳԵՆԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՀԷՆ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Ղաւասարդեան

1. 0—89

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպագրվում են և շուտով լոյս կը տեսնեն
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1914 թի պատկերազարդ
„ՇԻՐԱԿ“
պատմ. և ծոցի
ՕՐԱՑՈՒՑՆԵՐԸ։
(հ.) 735. 3—3

Զափահասների համար
ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. Քէլոլէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ
1) «Դադրեցի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վիներական և այլ յաւելը), բազմաթիւ ըէցէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսուկ) եւ Երա բժշկութիւնը» ըէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Կենիկարմաթ շալվարը կամ մ՞դեի իւրակէն», խիստ ծիծաղաշարժ վոդեվիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօնայի նօանդէրը» յայտնի վոդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.
5) «Միեւնոյն դագաղում», պատմուածք հայթուրքական կռիւներից. գիակների նկարներով Գինը 7 կ.։
6) «Բաճճի կենսագրութիւնը», պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Գինը 10 կ.։
Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պատուիրողները պէտք է առաջուց գրկեն գրքերի գինը մարքաներով ձեռնարկուած՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Ընդամենը՝ գրկանոց)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.
(հ. կ.) 44. 100—50

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետեւեալ հրատարակութիւնները.
I
ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ
երկաթ., կօշնակ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.։
II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.
III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.
Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանցներում։
(Ե.Հ.Կ.) 680. 20—11

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ԿԱԹՆԱՏՈՒՆ—„ՇՎԷՅՑԱՐԻԱ“—ԿՕՆԴԻՏԵՐՍԿԱՅԱ
ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ ՓՈՂՈՑԻՑ № 6 ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԳԷՕՐԳԻԵՎԿԱՅԱ ՓՈՂՈՑ № 1, տուն Միքելմանեանի, Քաշվէթի եկեղ. հանդէպ, շքեղապէս վերանորոգված բնակարանը։
Մթերքները թարմ եւ մատչելի գներով։ Ստացվում են բոլոր թերթերը։
Ցարգանօք՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
(կ. հ.) 779. 6—3

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ի յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400 ամեակի
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ Է
Հայերէն հրատարակութիւնների ցուցահանդէս
որ պէտք է բացվի Թիֆլիսում 1913 թ. հոկտ. 6-ին և տեւելու է մինչև նոյն ամսի 12-ը։
Ուստի խորհուրդը խնդրում է պ. պ. հեղինակներին, հրատարակիչներին, տպարանատէրերին և ամեն մի հայի՝ ուղարկել Ընկերութեանս հայերէն ամեն տեսակ հրատարակութիւններ, հայկական վիմատիպ պատկերներ և քարտէզներ։
Այն հրատարակութիւնները, որ կը նուիրվին Ընկերութեանս և կամ գրամով ձեռք կը բերվին, ցուցահանդէսից յետոյ պիտի պահվեն Ազգագրական Ընկ. մասնաշենքում, որ այդպիսով դառնալու է մի մնայուն յուշարձան հայ գրերի և տպագրութեան, իսկ սոսկ ցուցադրվելու նպատակով ստացվածները կը վերադարձվին տէրերին։
Ամեն ինչ պէտք է ուղարկել այս հասցէով. Армянскому Этнографическому Обществу. Тифлисъ
Խորհրդի նախագահ՝ Ս. Մելիք-Ազարեանց
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեանց
799. 2—1

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում
ՆՈՐ ՄԵԹՕԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՎՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամաչ՝ լի վճռով։ Կազմակերպվում են հասանելորդներից երեկոյեան խմբեր։ Զատապոլական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.
(օ.մ.) 743. 0—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան ժամերը.
Սա. ժ. 8-ից մինչև ցեր. ժ. 2-ը դպրոցում—I Тумановская № 13.
Երեկ. ժ. 5-ից մինչև ժ 8-ը կուրսերում—Михайловскій пр. № 53.
ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ԱՌԵՒՏՐ. ԹՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ. 771. 10—8

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկոլայեվսկայա, 36, Գօրոնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։
613. 50—31

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան Ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն,
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէյ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գիրք., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Նրէնդիսութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն հմտրնչի վրա. 7) Վաղելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օեար լեզուներ. 2) Գեղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և ուր. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դասա-դասա։ Ունկնդիրների թիւն չատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնական ներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացարաններից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 556. 0—34

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԼԻԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ
ատանում նշանակված է ներկայ սեպտեմբերի 23-ին, ցերեկվայ ժամը 12-ին
ԱՃՈՒՐԴ և երեք օրից յետոյ կրկնաճուրդ Թիֆլիսի Զորաբաշի ս. Գէորգ եկեղեցու գաւթում գտնված եկեղեցապատկան տան մէջին և ներքին յարկը վարձով տալու համար. Ցանկացողները կարող են ծանօթանալ գրագրութեանց հետ կօնսիստօրիայի գրասենեակում ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը։
Կօնսիստօրիայի անդամ՝ ՍԱՐԳԻՍ ա.-ք. ՇԻՈՅԵԱՆ
Ատենադպիր՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ
798. 2—1

Ներսու փոխանորդութեան Զօրոյ եւ Միրզաբէկոյ Միացեալ Թուրքախօս հայ գիւղերի միդասեան հայոց դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի փորձված միջնակարգ կրթութեամբ
Թուրքախօս
ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ
300 ր. ռոճիկ, բնակարան, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ։ Ցանկացողները դիմեն Нуха, архимандриту Егише Агаронянцъ։
707. 3—1

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԷՄ. Բ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ
գրաւոր աշխատութիւններից վաճառվում են մեզ մօտ հետևեալները.
1) Ընտիր հատ. ա. մ. 5-դ տպ. 80 կ.
2) Ընտիր հատ. բ. մ. 2-դ տպ. 80 կ.
3) Կրօնի պատ. Թ. Ա. Մէնէչիսի 1 ր. 25 կ.
4) Խաչեր . . . . . 40 կ.
Գումարով գնողներին 10-ից ոչ պակաս 20% զիջումն կը լինի, ճանապարհի ծախսը մեզանից, վերադիր վճարով։
Մեր հասցէն՝ Москва Владиміро-Доморуковская ул. д. Смирнова, кв. 150. Марія М. Назарьянцъ.
(հ. շ.) 708. 6—6

Սեպտեմբերի 10-ից վաճառվում է
Դպրոցական տօներին
ԵՐԳԵՐ և ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ
(հայրապետական, Թարգմանչաց. Վարդանանց, ազնուական, խաղ ժողովրդական)
Գինն է 20 կոպ.
Դիմել՝ Армавиръ, учителю-регенту М. Тарахчіанъ և «Գուսանները» ու «Գիր» գրախանութներին։
(հ.) 727. 5—3

Էջմիածնի ճեմարանի սեմինարական բաժինը աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
կամենում է հայոց լեզուի դասեր ունենալ հայ ընտանիքներում և պատրաստել աշակերտներ թեմական դպրոցների համար։ Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեան՝ հացէն իմանալու համար։
792. 2—2

Գանձակի հայոց հոգևոր կառավարութեան համար հարկաւոր է
մի հմուտ քարտուղար,
որ պէտք տիրապետէ հայ և ռուս լեզուներին։ Տարեկան ռոճիկն է 600 ր.։ Ցանկացողները կարող են դիմել Գանձակի հոգևոր կառավարութեան, ներկայացնելով ուման և ծառայութեան վկայականները մինչև սեպտեմբերի վերջը։
787. 4—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица. домъ казенный